ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-428-20.12.2019,02.03.2020-ՊԻ-011/1 ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱՎԵՐՅԱԼ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հոդված 35. Դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունների դադարումը և դադարեցումը

1. Դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունները դադարում են պաշտոնավարման ժամկետը լրանալու, դատարանի վերացման, նրանց՝ որպես դատավորի լիազորությունների դադարման, դադարեցման, Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրվելու~~, նրա նկատմամբ սույն օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 3.2.-րդ կետով սահմանված կարգապահական տույժի կիրառման,~~ ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում:

1.1. Դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի կողմից իր պարտականությունները չկատարելը հիմք է սույն օրենսգրքի 149-րդ հոդվածի 1.1-ին մասի 4-րդ կետով սահմանված կարգով նրա՝ որպես դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունները դադարեցնելու համար:

2. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահը հրաժարականի մասին գրավոր դիմումի մեջ նշում է հրաժարականի հիմք հանդիսացող հանգամանքները: Բարձրագույն դատական խորհուրդը կարող է չընդունել առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի նախագահների հրաժարականը:

3. Վճռաբեկ դատարանի և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի կողմից հրաժարական ներկայացվելու դեպքում նրա՝ որպես Վճռաբեկ դատարանի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունները դադարում են Բարձրագույն դատական խորհրդի նիստում իր հրաժարականը պնդելու կամ այդ նիստին չներկայանալու օրվանից:

Հոդված 45. Դատարանների, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին, Բարձրագույն դատական խորհրդի դատավոր

Comment [ԱԺ1]: 1.Առաջարկները ներկայացված են օրենքներում կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ տեղեկանքում արված նկատառումներում, իսկ տեղեկանքի տեքստում կատարված են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:
2. Տեղեկանքում կատարված մյուս փոփոխություններից տարբերակելու նպատակով առաջարկներն ընդգծված են և ամբողջությամբ տեսանելի են նկատառումների ցուցադրումը հանելու դեպքում:

Comment [ԱԺ2]: Լրացնել նշված բառերով և կատարել ստորև նշված փոփոխություններ: Նման կարգավորում առկա է ԴՕ 87-րդ հոդվածի 2-րդ մասում: Մանրամասները տես՝ ԴՕ 149-րդ հոդվածի 1.1-ին մասով առաջարկվող փոփոխությունում:

Comment [ԱԺ3]: Նշված բառերը հանել

Comment [ԱԺ4]: Լրացնել 1.1-ին մասով:

անդամներին, Ընդհանուր ժողովի հանձնաժողովների անդամներին ~~և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորներին~~ գործերի բաշխման առանձնահատկությունները

1. Հավասարաչափ բաշխման չափանիշներից սահմանվում են հետևյալ նվազեցումները.

1) 10 տոկոս՝ Ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Ուսումնական հարցերի հանձնաժողով) անդամների համար.

2) 20 տոկոս՝ ~~Կարգապահական հարցերի հանձնաժողով~~ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով ի անդամների համար.

3) 25 տոկոս՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների համար.

4) 30 տոկոս՝ մասնագիտացված դատարանների նախագահների~~, Էթիկայի և կարգապահական հարցերի և~~ դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով~~ներ~~ի համար.

5) 35 տոկոս՝ ~~Վճռաբեկ դատարանի և~~ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների, ինչպես նաև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի համար.

5.1.) ~~5~~60 տոկոս՝ Վճռաբեկ դատարանի նախագահի համար.

6) 75 տոկոս՝ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների համար:

2. Բարձրագույն դատական խորհրդի նախագահ ընտրված դատավորի անուն-ազգանունը հանվում է գործերի բաշխման ցուցակից Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնավարման ժամկետով:

3. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների համար Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել Հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազեցման տոկոսաչափ:

Հոդված 51. Դատավորի անձեռնմխելիությունը

1. Դատավորը, Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

2. Սահմանադրության 164-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ:

Comment [ԱԺ5]: Գատարել նշված փոփոխությունները:

3. Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո:

4. Ի լրումն Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքի՝ ազատությունից զրկելու պահից դատավորն իրավունք ունի հեռախոսազանգով կամ հաղորդակցման այլ միջոցներով այդ մասին անհապաղ տեղեկացնել Բարձրագույն դատական խորհրդի նախագահին կամ այլ անդամի:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում դատավորին ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում են Բարձրագույն դատական խորհրդի նախագահը և գլխավոր դատախազը: Դատավորին ձերբակալելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է Բարձրագույն դատական խորհուրդ և գլխավոր դատախազին: Դատավորին ազատությունից զրկած մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել Բարձրագույն դատական խորհրդի նախագահի և մյուս անդամների անարգել մուտքն այն վայր, որտեղ պահվում է ազատությունից զրկված դատավորը, և ապահովել նրանց տեսակցությունը դատավորի հետ, եթե Բարձրագույն դատական խորհրդի տվյալ անդամի վերաբերյալ քրեական հետապնդման մարմինը տեսակցությունը սահմանափակող որոշում չի կայացրել:

6. Դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը և տվյալ գործով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը:

Comment [ԱԺ6]: Թողնել անփափոխ:

7. Քրեական վարույթի շրջանակում դատավորի նկատմամբ գործողությունները կատարվում են՝ առավելագույնս ապահովելով մինչդատական քրեական վարույթի գաղտնիությունը, դատավորի հեղինակության ու անկախության նկատմամբ հարգանքը, բացառելով դատավորի գործունեությանը ուղղակի կամ անուղղակի որևէ միջամտություն:

8. Պաշտոնավարման ընթացքում և լիազորությունները դադարեցվելուց կամ դադարելուց հետո դատավորը չի կարող հարցաքննվել որպես վկա այն գործով, որի շրջանակում նա իրականացրել է իր լիազորությունները՝ որպես դատավոր:

Հոդված 69. Դատավորի վարքագծի ընդհանուր կանոնները

1. Ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է՝

1) զերծ մնալ դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց.

2) չօգտագործել կամ թույլ չտալ այլ անձանց օգտագործելու իր՝ դատավորի պաշտոնի հեղինակությունը՝ ի շահ իրեն կամ այլ անձի.

3) դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն.

4) զերծ մնալ մեկ այլ դատավորի կողմից արդարադատության իրականացմանը միջամտելուց.

5) զերծ մնալ դատավորի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց.

6) զերծ մնալ դատարանի գործողությունները, դատական ակտերը հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց, բացառությամբ օրենքով նախատեսված կամ գիտական ազատության շրջանակում իրականացվող մասնագիտական գործունեության դեպքերի.

7) զերծ մնալ որևէ դատարանում քննվող կամ ակնկալվող գործի վերաբերյալ հրապարակայնորեն կարծիք հայտնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավորը գործով հանդես է գալիս որպես կողմ կամ կողմի օրինական ներկայացուցիչ.

8) զերծ մնալ այնպիսի հայտարարություն անելուց կամ վարքագիծ դրսևորելուց, որը վտանգում կամ կասկածի տակ է առնում դատավորի կամ դատարանի անկախությունը և անաչառությունը.

9) արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու վերաբերյալ անհապաղ հայտնել Բարձրագույն դատական խորհրդին.

10) հանդես չգալ որպես ներկայացուցիչ կամ չտրամադրել խորհրդատվություն, այդ թվում՝ անհատույց հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հանդես է գալիս որպես օրինական ներկայացուցիչ կամ անհատույց իրավաբանական խորհրդատվություն է մատուցում իր մերձավոր ազգականներին կամ իր խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձանց.

11) պահպանել սույն օրենսգրքով սահմանված՝ նվեր ընդունելու սահմանափակումները.

12) չնախաձեռնել, թույլ չտալ և հաշվի չառնել առանց դատավարության հակառակ կողմի կամ նրա փաստաբանի մասնակցության (“ex parte” (էքս պարտե), այսուհետ՝ ընդդիմազերծ) դատավարության մյուս կողմի կամ նրա փաստաբանի հետ շփումները, իսկ դատավորի կամքից անկախ ընդդիմազերծ շփումներ տեղի ունենալու դեպքում առաջին իսկ հնարավորության պարագայում հայտնել դրանց բովանդակությունն այն կողմին, որը մասնակից չի եղել այդ շփումներին՝ հնարավորություն տալով արձագանքելու: Սույն կանոնից բացառությունները թույլատրելի են միայն հետևյալ դեպքերում.

ա. երբ հանգամանքների բերումով ընդդիմազերծ շփումներն անհրաժեշտ են կազմակերպական նպատակներով, ինչպես օրինակ՝ դատական նիստի ամսաթիվը և ժամը համաձայնեցնելու կամ դատավարության կազմակերպման այլ դեպքերում, և այն պայմանով, որ շփումները չեն վերաբերում գործի էությանը, դրանց արդյունքում դատավարության կողմերից մեկը չի ստանում դատավարական կամ այլ առավելություն մյուս կողմի նկատմամբ, և դատավորն առաջին իսկ հնարավորության պարագայում

հայտնում է այդ շփումների բովանդակությունը մյուս կողմին՝ նրան հնարավորություն տալով արձագանքելու,

բ. երբ դատավորի կողմից միակողմանի շփումներ իրականացնելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով.

13) չնախաձեռնել և թույլ չտալ վերադաս այն դատարանի դատավորի հետ խորհրդակցելը, որին տվյալ գործով կարող է ներկայացվել բողոք, ինչպես նաև այն դատավորի հետ, որն ինքնաբացարկ է հայտնել տվյալ գործով.

14) երբ դատավորը կիրառման ենթակա իրավունքի վերաբերյալ հարցերով խորհրդակցելու համար դիմում է գործի ելքում չշահագրգռված մասնագետի (բացառությամբ այլ դատավորի, ինչպես նաև դատարանի աշխատակազմի այն աշխատակիցների, որոնց գործառույթը դատավորին արդարադատություն իրականացնելիս օժանդակելն է), ապա դատավորն առաջին իսկ հնարավորության պարագայում պարտավոր է կողմերին տեղեկացնել այդ մասնագետի ինքնության, ներկայացված հարցի վերաբերյալ ստացված կարծիքի մասին և հնարավորություն տալ նրանց այդ կապակցությամբ ներկայացնելու իրենց դիրքորոշումը:

15) ներկայացնել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ.

16) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնել պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ է:

Comment [Ա67]: Առաջարկվում է, այս դրույթները սահմանել առանձին հոդվածով՝ որպես դատավորի պարտականություն, որի խախտման դեպքում դատավորը ենթակա է կարգապահական պատասխանատվության: Տես՝ Վենետիկի հանձնաժողովի եզրակացության 51-րդ կետ:
Ի լրումն, առաջարկվում է վերանայել վարքագծի բոլոր կանոնները՝ տարանջատելով դատավորի պարտականությունները վարքագծի կանոններից:

Հոդված 70. Դատավորի վարքագծի կանոններն ի պաշտոնե գործելիս

1. Արդարադատության և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման հետ կապված դատավորի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ գործունեության նկատմամբ:

2. Ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է՝

1) քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են ինքնաբացարկ հայտարարելու հիմքեր.

2) դատական ակտերը կայացնելիս լինել ինքնուրույն.

3) լինել անաչառ և զերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելուց.

4) ~~բարեխղճորեն և լիարժեք կատարել իր պաշտոնեական պարտականությունները, համագործակցել դատարանի աշխատակազմի և այլ դատավորների հետ~~ պահպանել ներքին աշխատանքային կարգապահության կանոնները.

Comment [ԿՀ8]: Այս մասը թողնել անփոփոխ:

5) հարգալից և բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերել դատավարության մասնակիցների, դատավորների, դատարանի աշխատակազմի և բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատավորը շփվում է ի պաշտոնե.

6) առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը.

7) թույլ չտալ շահերի բախում, բացառել ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունների՝ իր ի պաշտոնե լիազորությունների իրականացման վրա որևէ ազդեցություն.

8) արդարադատության և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումից զատ, այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

9) մասնակցել պարտադիր վերապատրաստման ծրագրերին.

~~10) ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու հմտությունների շարունակական կատարելագործումը.~~

~~11) դատական ծառայողների նշանակման գործընթացին մասնակցելիս խուսափել հովանավորչություն դրսևորելուց.~~

12) դատական նիստերը վարել պատմուճանով.

13) չմիջամտել դատական նիստերի ձայնագրման համակարգի աշխատանքին.

~~14) ողջամտության սահմաններում իրեն դրսևորել այնպես, որ նվազագույնի հասցվեն ինքնաբացարկի անհրաժեշտություն առաջացնող դեպքերը.~~

~~14) զերծ մնալ այնպիսի գործողություններ ձեռնարկելուց, որոնք նպատակ են հետապնդում ստեղծել ինքնաբացարկի հիմքեր.~~

15) մասնակցել Ընդհանուր ժողովի, իսկ Ընդհանուր ժողովի հանձնաժողովի անդամ լինելու դեպքում՝ այդ հանձնաժողովի նիստերին.

16) տեղյակ պահել համապատասխանաբար՝ փաստաբանների պալատին կամ գլխավոր դատախազին փաստաբանի կամ դատախազի կողմից վարքագծի կանոնների այնպիսի խախտման մասին, որը կասկածի տակ է դնում այդ փաստաբանի կամ դատախազի ազնվությունը.

17) զանգվածային լրատվության միջոցների հետ շփումներն իրականացնել Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կանոններին համապատասխան.~~÷~~

~~18) ինքնաբացարկի հիմքերի առկայության դեպքում դրանք բացահայտել կողմերին, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով հայտնել ինքնաբացարկ:~~

3. Դատարանի նախագահը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատի նախագահը պարտավոր է սույն օրենսգրքով սահմանված դատարանի նախագահի կամ վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պարտականությունները կատարել պատշաճ և ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են հանգեցնել դատարանի բնականոն գործունեության խաթարման:

Comment [ԿՀ9]: Պահպանել:

Comment [ԱԺ10]: Վերը նշված առաջարկն ընդունվելու դեպքում սա էլ, կարող է սահմանվել որպես պարտականություն:

Comment [ԱԺ11]: Կետը հանել, հաշվի առնելով ԴՕ 71-րդ հոդվածով սահմանված կարգավորումները:

Comment [ԱԺ12]: Այս մասը նույնպես սահմանել որպես պարտականություն՝ կատարելով նշված փոփոխությունները:

Հոդված 73. Դատավորի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները

1. Դատավորը չպետք է նվեր ընդունի կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տա~~, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է իր պաշտոնեական պարտականություններն իրականացնելու հետ~~: Դատավորը պետք է ձգտի զերծ պահել իր ընտանիքի անդամներին ~~և~~ կամ իր հետ բնակվող այլ մերձավոր ազգականներին այդպիսի գործողություններից:

2. Սույն օրենսգրքի իմաստով՝ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի դատավոր չհանդիսացող այլ անձի կամ դատավոր չհանդիսացող անձի ընտանիքի անդամին կամ դատավոր չհանդիսացող անձի հետ բնակվող այլ մերձավոր ազգականին, և ընդգրկում է նաև ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, ակնհայտ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը և այլ գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն:

3. Սույն հոդվածով սահմանված սահմանափակումները չեն տարածվում՝

1) դատավորի ընտանիքի անդամի կամ դատավորի հետ բնակվող այլ մերձավոր ազգականի կողմից իր ձեռնարկատիրական, մասնագիտական կամ այլ բնույթի գործունեության կամ անձնական հարաբերությունների կապակցությամբ ստացված նվերի վրա, այդ թվում՝ այն նվերի, որը կարող է օգտագործել նաև դատավորը, սակայն պայմանով, որ նման նվերը չի կարող ողջամտորեն ընկալվել որպես դատավորի պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված.

2) դատավորի, նրա ընտանիքի անդամի կամ նրա հետ բնակվող այլ մերձավոր ազգականի կրթաթոշակի, դրամաշնորհի կամ նպաստի վրա, որը տրվել է հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի հետևանքով.

3)) ֆինանսական կազմակերպություններից դատավորին, նրա ընտանիքի անդամին կամ նրա հետ բնակվող այլ մերձավոր ազգականին սովորական կամ ընդհանուր պայմաններով տրված ~~ստացված~~ փոխառության վրա:

4. ~~Դատավորի համար թույլատրելի~~Սույն հոդվածի իմաստով նվերներ չեն համարվում՝

1) հրապարակային կամ արարողակարգային միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերները,

1.1) դատավորի աշխատանքային գործունեության ապահովման համար՝ պետական բյուջեից անհատույց տրամադրվող գույքը կամ ծառայությունները.

1.2) ծառայողական գործուղումների հետ կապված՝ տրանսպորտային, բնակարանային և այլ ծախսերի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դատավորին տրամադրվող փոխհատուցումը.

1.3) պաշտոնական, ծառայողական, աշխատանքային այցերի կամ միջոցառումների ժամանակ սովորաբար կազմակերպվող կամ արարողակարգային հյուրասիրությունը.

Comment [Ա.Ժ13]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [Ա.Ժ14]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [Ա.Ժ15]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [Ա.Ժ16]: Կատարել նշված լրացումը:

Comment [Ա.Ժ17]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [Ա.Ժ18]: Կատարել նշված փոփոխությունները:

2) կենցաղային հյուրընկալության դեպքում տրվող նվերները, եթե դրանք իրենց բնույթով համապատասխանում են կենցաղային հյուրընկալության ժամանակ սովորաբար տրվող նվերներին,

3) մերձավոր ազգականից ստացված նվերները,

4) բարեկամից ստացված նվերները, եթե նվերն էությամբ և չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջև հարաբերությունների բնույթին:

5. Եթե սույն ~~հոդվածով թույլատրելի համարվող~~հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված նվերները (~~բացառությամբ մերձավոր ազգականից ստացված նվերների), որոնք~~ ստացվել են նույն անձից~~,~~ և իրենց արժեքով գերազանցում են հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամը կամ օրացուցային տարում գերազանցում են չորս հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամը, ապա դատավորը պարտավոր է դրա մասին տասնօրյա ժամկետում հայտնել ~~Կարգապահական հարցերի հանձնաժողով~~ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին: Եթե ~~Կարգապահական հարցերի հանձնաժողով~~ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն ստացված նվերը (նվերները) գնահատում է որպես սույն հոդվածով թույլատրելի չհամարվող, ապա մեկշաբաթյա ժամկետում տեղեկացնում է այդ մասին դատավորին: ~~Կարգապահական հարցերի հանձնաժողով~~ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովից ծանուցումն ստանալու պահից կիրառելի են սույն հոդվածի 7-րդ մասի կանոնները:

6. Եթե դատավորին հայտնի է դառնում, որ իր ընտանիքի անդամին կամ իր հետ ընակվող այլ մերձավոր ազգականին տրվել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես դատավորի պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա նա պարտավոր է այդ մասին տեղեկություն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, հայտնել Էթիկայի և ~~Կ~~կարգապահական հարցերի հանձնաժողովին:

~~7. Եթե դատավորը ստացել է սույն հոդվածով թույլատրելի չհամարվող նվեր, ապա նա պարտավոր է այն վերադարձնել կամ համարժեք հատուցում վճարել նվերն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Եթե սահմանված ժամկետում նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա նա պարտավոր է նվերն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, այն հանձնել Հայաստանի Հանրապետությանը՝ Կառավարության սահմանած կարգով:~~

7~~6~~. Եթե դատավորը ստացել է նվեր կամ հետագայում նվեր ընդունելու առաջարկ, որը կարող է ողջամտորեն ընկալվել որպես իր պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա նա պարտավոր է՝

1) մերժել նվերի ընդունումը, կամ

2) նվերն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում այն վերադարձնել, համարժեք հատուցում վճարել կամ Կառավարության սահմանած կարգով նվերը հանձնել Հայաստանի Հանրապետությանը:

Comment [Ա.Ժ20]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [Ա.Ժ21]: Լրացնել նշված բառերով:

Comment [Ա.Ժ22]: Նշված մասը հանել և շարադրել ստորև ներկայացվող խմբագրությամբ:

Comment [Ա.Ժ23]: 7-րդ մասը շարադրել նշված խմբագրությամբ:

Հոդված 74. Դատավորների ընդհանուր ժողովի կարգավիճակը և գործունեության կարգը

1. Ընդհանուր ժողովը դատավորների ինքնակառավարման մարմին է:

2. Ընդհանուր ժողովը կազմված է Հայաստանի Հանրապետության բոլոր դատավորներից, որոնք ի պաշտոնե Ընդհանուր ժողովի անդամներ են:

3. Հերթական Ընդհանուր ժողովը հրավիրվում է տարին մեկ անգամ՝ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից: Արտահերթ Ընդհանուր ժողով կարող է հրավիրել Վճռաբեկ դատարանի նախագահը՝ իր նախաձեռնությամբ, դատավորների առնվազն մեկ հինգերորդի կամ Ընդհանուր ժողովի հանձնաժողովի պահանջով: Նախաձեռնողն առաջարկում է օրակարգում ընդգրկվող հարցը:

4. Ընդհանուր ժողովը վարում է Վճռաբեկ դատարանի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող անձը:

5. Ընդհանուր ժողովը ~~իրականացնում է հետևյալ գործառույթները~~.

1) քննարկում և Բարձրագույն դատական խորհուրդ և այլ իրավասու պետական մարմիններ է ներկայացնում դատարանների գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ.

2) ձևավորում է ~~Կարգապահական~~Էթիկայի և կարգապահական հարցերի, Ուսումնական հարցերի, դատավորների գործունեության գնահատման (այսուհետ՝ Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով) հանձնաժողովներ և իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար՝ աշխատանքային խմբեր.

3) հաստատում է իր, հանձնաժողովների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև աշխատանքային խմբերի գործունեության կարգը.

4) ընտրում և առաջարկում է Սահմանադրական դատարանի դատավոր անդամների թեկնածությունները.

5) ընտրում է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին.

6) հաստատում է դատավորի պատմուճանի նկարագրությունը և տրամադրման կարգը.

7) սահմանում է դատավորի էթիկայի կանոնները.

8) քննարկում է դատարանների աշխատակազմերի տարեկան գործունեության վերաբերյալ Դատական դեպարտամենտի հաղորդումը.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

6. Ընդհանուր ժողովը և հանձնաժողովները գործում են Ընդհանուր ժողովի հաստատած գործունեության կարգին համապատասխան:

7. Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում է դատավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

8. Ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով:

9. Ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ:

10. Ընտրություններն իրականացվում են գաղտնի քվեարկությամբ:

Comment [ԱԺ24]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [ԱԺ25]: Կատարել նշված փոփոխությունը:

11. Քվեարկությունը կազմակերպելու, դրա արդյունքներն ամփոփելու, քվեաթերթիկները կազմելու կարգը և քվեաթերթիկի ձևը սահմանվում են Ընդհանուր ժողովի գործունեության կարգով:

12. Քվեարկությունը կազմակերպելու, քվեարկողների ձայները հաշվելու և քվեարկությունների արդյունքներն ամփոփելու նպատակով Ընդհանուր ժողովը կազմավորում է հաշվիչ հանձնաժողով՝ կազմված հինգ անդամից, որոնց ընտրում է Ընդհանուր ժողովը: Հաշվիչ հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի գործունեության կարգով:

13. Ընդհանուր ժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում Ընդհանուր ժողովում հրապարակվելու պահից, եթե այլ բան սահմանված չէ Ընդհանուր ժողովի որոշմամբ:

Հոդված 77. Ընդհանուր ժողովի հանձնաժողովների ձևավորումը

~~1. Ընդհանուր ժողովը ձևավորում է Կարգապահական հարցերի հանձնաժողով և Ուսումնական հարցերի հանձնաժողով:~~

1. Ընդհանուր ժողովը ձևավորում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով և Ուսումնական հարցերի հանձնաժողով:

2. Հանձնաժողովներն իրականացնում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով իրենց վերապահված գործառույթները:

3. Դատարանների նախագահները, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները, ~~և~~ Բարձրագույն դատական խորհրդի անդամները, ինչպես նաև հանրային ծառայողները կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք չեն կարող լինել Ընդհանուր ժողովի՝ սույն օրենսգրքով նախատեսված հանձնաժողովների անդամներ: Նույն անձը միաժամանակ չի կարող լինել Ընդհանուր ժողովի երկու հանձնաժողովի անդամ:

Comment [ԱԺ26]: Լրացնել նշված բառերով:

~~4. Կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է ութ անդամ, որոնցից երկուսը՝ մասնագիտացված դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուր մասնագիտացված դատարանից՝ մեկ դատավոր, մեկը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից, երկուսը՝ մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորներից (մեկը՝ քրեական, մեկը՝ քաղաքացիական մասնագիտացման), իսկ երեքը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուր վերաքննիչ դատարանից՝ մեկ դատավոր:~~

4. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն ունի տասնմեկ անդամ: ~~Էթիկայի և կարգապահական հարցերի հ~~Հանձնաժողովի կազմում ընդգրկվում է ~~ութ~~հինգ ~~անդամ~~դատավոր, որոնցից երկուսը՝ մասնագիտացված դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուր մասնագիտացված դատարանից՝ մեկ դատավոր, երկուսը՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից՝ քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ, ~~մեկը~~երեքը՝ վերաքննիչ

դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուր դատարանից մեկ դատավոր, մեկը երկուսը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից՝ յուրաքանչյուր պալատից մեկ դատավոր: Բացի դատավորներից, էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովումի կազմում ընդգրկվում են սույն հոդվածի 7.1-ին մասով սահմանված պահանջներին համապատասխանող 2 հեղինակավոր իրավաբան անդամներ, որոնց ներկայացնում են, սույն հոդվածի 7.1-րդ մասում մատնանշված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները:

5. Ուսումնական հարցերի հանձնաժողովն ունի ինը անդամ: Ուսումնական հարցերի հՀանձնաժողովի կազմում ընդգրկվում է յոթ անդամդատավոր, որոնցից մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից, երկուսը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, երկուսը՝ առաջին ատյանի դատարանների դատավորներից: Բացի դատավորներից, Ուսումնական հարցերի հանձնաժողովումի կազմում ընդգրկվում են սույն հոդվածի 7.1-ին մասով սահմանված պահանջներին համապատասխանող 2 հեղինակավոր իրավաբան անդամներ, որոնց ներկայացնում են սույն հոդվածի 7.1-ին մասում մատնանշված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները և որոնց նկատմամբ տարածվում են այդ մասով սահմանված պահանջները: Ուսումնական հարցերի հանձնաժողովի հեղինակավոր իրավաբաններին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ սույն հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով՝ չորս տարի ժամկետով:

5. Ուսումնական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է յոթ անդամ, որոնցից մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից, երեքը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուրից մեկ անդամ, երեքը՝ առաջին ատյանի դատարանների դատավորներից:

5. Ուսումնական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է յոթ անդամ, որոնցից մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից, երեքը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուրից մեկ անդամ, երեքը՝ առաջին ատյանի դատարանների դատավորներից:

5.1. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովն ունի ինն անդամ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում է յոթ անդամդատավոր, որոնցից մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից, երկուսը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, երկուսը՝ առաջին ատյանի դատարանների դատավորներից: Բացի դատավորներից, հանձնաժողովումի կազմում ընդգրկվում են սույն հոդվածի 7.1-ին մասով սահմանված պահանջներին համապատասխանող 2 հեղինակավոր իրավաբան անդամ

5.2. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի անդամի թեկնածու կարող է ընտրվել այն դատավորը, ով ունի դատավորի պաշտոնում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ և գործունեությունը գնահատված լինելու դեպքում՝ գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական, իսկ իրավաբան գիտնական անդամի թեկնածու կարող է ընտրվել այն հեղինակավոր իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի

Comment [ԱԺ27]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [ԱԺ28]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [ԱԺ29]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [ԱԺ30]: Նշված բառը հանել:

իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն:

~~6. Դատավորը կարող է առաջադրվել որպես հանձնաժողովի անդամ ինքնաառաջադրման կամ այլ դատավորի կողմից իր համաձայնությամբ առաջադրվելու եղանակո~~

6. Գործող դատավորը և իրավաբան գիտնականը~~՝ բացառությամբ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի, որպես հանձնաժողովի անդամ կարող են առաջադրվել ինքնաառաջադրման կամ~~ կարող են առաջադրվել Ընդհանուր ժողովի որևէ առնվազն հինգ դատավորի կողմից իրենց համաձայնությամբ առաջադրվելու եղանակով:

7. Հանձնաժողովների անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով: Ընդհանուր Ժողովի կողմից հանձնաժողովների ոչ դատավոր անդամներին սահմանված ժամկետում չընտրելու դեպքում քվեարկությունից հետո տասնօրյա ժամկետում նրանց ընտրում է Բարձրագույն դատական խորհուրդը: Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամների ընտրության առանձնահատկությունները սահմանվում են սույն հոդվածի 7.1.-ին մասով:

7.1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ ~~երկու~~ չորս տարի ժամկետով: ~~Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի ոչ դատավոր անդամներին ներկայացնում են համապատասխան հասարակական կազմակերպությունները:~~ Որպես հանձնաժողովի անդամ կարող է առաջադրվել այն ~~հեղինակավոր~~ իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն, որևէ կուսակցության անդամ չէ և ~~չունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցանքի համար~~ առկա չեն սույն օրենսգրքի 112-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները: ~~Վերջիններիս ներգրավելու նպատակով Դատական դեպարտամենտը դատավոր անդամների ընտրությունից առնվազն երեսուն օր առաջ հայտարարում է մրցույթ, որի շրջանակներում մեկական թեկնածու կարող են առաջադրել այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ դատական իշխանության հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն: Թեկնածուների կենսագրությունները և նրանց ներկայացրած կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքում: Հանձնաժողովի անդամների ընտրությունն իրականացվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ հաշվի առնելով թեկնածուի կրթությունը, նրա և նրան ներկայացրած կազմակերպության՝ սույն հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանությունը, քննարկման առարկա բնագավառում գործունեության փորձը, արդյունքները, ձեռքբերումները և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:~~

Comment [Ա31]: Կատարել նշված փոփոխությունները՝ բոլոր հանձնաժողովների իրավաբան անդամներին առաջադրելով Ընդհանուր ժողովի առնվազն հինգ դատավորի կողմից:

Comment [Ա32]: Անցումային դրույթներով սահմանել, որ բոլոր հանձնաժողովների առաջին կազմի անդամներն ընտրվում են պաշտոնավարման տարբեր ժամկետներով, օրինակ՝ մեկ, երկու երեք և չորս տարի ժամկետներով, ապահովելով հանձնաժողովի անդամների ռոտացիան:

Comment [Ա33]: Կատարել նշված փոփոխությունը և անցումային դրույթներով սահմանել ռոտացիայի վերը նշված կարգը:

Comment [Ա34]: Նախադասությունը հանել:

Comment [Ա35]: Կատարել նշված փոփոխությունները՝ հանձնաժողովի իրավաբան անդամների վրա տարածելով ԴՕ-ով դատավորների նկատմամբ սահմանված բոլոր սահմանափակումները և այդպիսով համապատասխանեցնելով նաև սույն հոդվածի 10-ր մասով սահմանված կարգավորումներին:

~~Հանձնաժողովի անդամներին ընտրելու վերաբերյալ որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, երկու տարի ժամկետով: Մրցույթի անցկացման և հանձնաժողովի անդամների ընտրության կարգն ու մանրամասները սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:~~ ~~7. Հանձնաժողովների անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ հինգ տարի ժամկետով:~~

Comment [Ա36]: Հանել նշված նախադասությունները, հաշվի առնելով որ հանձնաժողովների իրավաբան անդամներին առաջարկվում է առաջադրել Ընդհանուր ժողովի առնվազն հինգ դատավորի կողմից:

8. Քվեարկության անցկացման կարգի մանրամասները սահմանվում են Ընդհանուր ժողովի գործունեության կարգով: Քվեարկելիս դատավորն ունի, քվեարկվող տեղերի քանակին համապատասխան, մեկական ձայնի իրավունք: Ընտրված են համարվում առավել շատ ձայներ ստացած թեկնածուները: Ձայների հավասարության դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ունի դատավորի ավելի երկար փորձառություն, իսկ փորձառության հավասարության դեպքում՝ այն թեկնածուն, որն ունի ավելի երկար մասնագիտական աշխատանքի փորձառություն: Մեկ թեկնածու առաջադրվելու դեպքում նա ընտրվում է նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին ստանալու դեպքում:

9. Դատավորների գործունեության գնահատման, ինչպես նաև էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովների ոչ դատավոր անդամին Դատական դեպարտամենտը վճարում է վարձատրություն Կառավարության սահմանած կարգով և չափով:

10. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են սույն օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, և դադարեցվում են տարվա ընթացքում հանձնաժողովի նիստերին անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ չմասնակցելու, առնվազն մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելու կամ ձեռնպահ մնալու դեպքում, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված քվեարկությանը մասնակցությունը բացառող դեպքերի, օրենքով և Հանձնաժողովի աշխատակարգով նախատեսված իր պարտականությունները չկատարելը, իսկ դատավոր անդամների դեպքում՝ նաև որպես դատավոր լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու դեպքում: Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնելու հարցը լուծելու համար Հանձնաժողովի նախագահի կողմից նիստ չհրավիրվելու դեպքում այն հրավիրվում է Հանձնաժողովի առնվազն երեք անդամի կողմից: Հանձնաժողովը կայացնում է որոշում Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին: Հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարում են նրա՝ որպես Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման կամ դադարեցման, ինչպես նաև նրա՝ Հանձնաժողովի նախագահի պաշտոնից հրաժարական ներկայացնելու դեպքում: Հանձնաժողովի նախագահի կողմից իր պարտականությունները չկատարելը հիմք է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ նրա լիազորությունները դադարեցնելու համար:

11. Հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում հանձնաժողովի նախագահը յոթօրյա ժամկետում դիմում է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ արտահերթ Ընդհանուր ժողով հրավիրելու և հանձնաժողովի նոր անդամի ընտրությունը կազմակերպելու համար: Արտահերթ Ընդհանուր ժողով պետք է

հրավիրվի հանձնաժողովի նախագահի դիմումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում:

Հոդված 78. Ընդհանուր ժողովի հանձնաժողովների գործառույթները և գործունեությունը

1. Յուրաքանչյուր հանձնաժողով իր ~~կազմից, իսկ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն իր~~ դատավոր անդամների կազմից հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ ընտրում է հանձնաժողովի նախագահ, որը ղեկավարում է հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը:

Comment [ԱԺ37]: Կատարել նշված փոփոխությունները՝ բոլոր հանձնաժողովների նախագահներին ընտրելով դատավոր անդամների կազմից:

2. ~~Կարգապահական հարցերի հանձնաժողով~~ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը՝

1) դատավորի նկատմամբ հարուցում է կարգապահական վարույթ.

2) իրականացնում է սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ գործառույթներ:

3. Ուսումնական հարցերի հանձնաժողովը՝

1) հաստատում է դատավորների վերապատրաստման կարգը.

2) դատավորի թեկնածուների հավակնորդների գնահատման համար առաջարկում է դատավորի թեկնածություն՝ նրա համաձայնությամբ.

3) դատավորների, դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերում ներառելու նպատակով Արդարադատության ակադեմիա է ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ.

4) Արդարադատության ակադեմիա է ներկայացնում հաջորդ տարվա ընթացքում վերապատրաստման ենթակա անձանց ցուցակը՝ առարկայական կուրսերի ընտրության նշումով.

5) սահմանում է դատավորների, դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների ուսումնառության ժամաքանակը.

6) Արդարադատության ակադեմիային առաջարկում է դատավորների թեկնածուների հավակնորդների փորձաշրջանի ղեկավարներ.

7) իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ գործառույթներ:

4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝

1) իրականացնում է դատավորների գործունեության գնահատումը.

2) սույն օրենսգրքի 142-րդ հոդվածով սահմանված՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում կամ դատավորի վարքագծի կանոնների խախտում (այդ թվում՝ էական կարգապահական խախտում) հայտնաբերելու դեպքում դիմում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:

Հոդված 84. Բարձրագույն դատական խորհրդի նախագահը

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 174-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան՝ Բարձրագույն դատական խորհուրդն իր կազմից ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար Ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից:

2. Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ընտրության համար գաղտնի քվեարկվում են համապատասխանաբար Ընդհանուր ժողովի կամ Ազգային ժողովի կողմից ընտրված բոլոր անդամների թեկնածությունները:

3. Բարձրագույն դատական խորհրդի նախագահն ընտրվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

4. Քվեարկության համար կազմվում է քվեաթերթիկ, որում ներառվում են բոլոր թեկնածուները:

5. Քվեարկելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամն ունի մեկ ձայն: Եթե քվեարկության մասնակիցն ավելի ձայն է տվել, ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր:

6. Եթե քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել ձայների կեսից ավելին, ապա անցկացվում է լրացուցիչ քվեարկություն, որին մասնակցում են առավել ձայներ ստացած երկու թեկնածուները:

7. Եթե ձայների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել առավել ձայներ ստացած երկու թեկնածուներին, ապա նախապատվությունը տրվում է մասնագիտական աշխատանքի առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին, իսկ փորձառության հավասարության դեպքում՝ տարիքով ավագին:

8. Լրացուցիչ քվեարկության ժամանակ Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Լրացուցիչ քվեարկության ժամանակ ձայների թվի կեսից ավելի ստացած թեկնածուն համարվում է ընտրված: Եթե ոչ մեկը չի ստացել քվեարկության մասնակիցների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ, ապա անցկացվում է նոր ընտրություն:

9. Բարձրագույն դատական խորհրդի նախագահն ընտրվում է առանց վերընտրվելու իրավունքի ~~մեկերկուսուկես~~ երկու տարի ժամկետով, բայց ոչ ավելի քան մինչև որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ իր պաշտոնավարման ժամկետի ավարտը:

Comment [Ա38]: Սահմանել երկու տարի:

10. Բարձրագույն դատական խորհրդի նոր նախագահի ընտրությունը կատարվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնը թափուր մնալուց ~~անդամի թափուր տեղը համալրվելուց~~ հետո՝ տասնօրյա ժամկետում:

11. Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերը, ստորագրում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների հետ հարաբերություններում, ինչպես նաև իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ:

12. Արձակուրդի կամ գործուղման դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարում է նրա կողմից նշանակված Բարձրագույն դատական խորհրդի անդամը:

13. Բարձրագույն դատական խորհրդի նախագահի կողմից արձակուրդի կամ գործուղման մեջ գտնվելու դեպքում իրեն փոխարինող չնշանակելու, ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների կասեցման, դադարման կամ դադարեցման դեպքերում Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պարտականությունները կատարում է տարիքով ավագ անդամը:

Հոդված 85. Բարձրագույն դատական խորհրդի անդամի կարգապահական պատասխանատվությունը

1. Բարձրագույն դատական խորհրդի անդամին Բարձրագույն դատական խորհուրդը կարող է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ սույն օրենսգրքով սահմանված դատավորի վարքագծի կանոնները խախտելու համար:

2. Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է Բարձրագույն դատական խորհրդի առնվազն երեք անդամի միջնորդության հիման վրա:

Սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբն կարգապահական վարույթ է հարուցում և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհուրդ է դիմում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Comment [Ա39]: Այս փոփոխությունը սահմանել առանձին ընթացակարգով (տես՝ ԴՕ 145-րդ հոդվածի վերաբերյալ նկատառումները):

3. Բարձրագույն դատական խորհրդի անդամի կարգապահական վարույթի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 19-րդ գլխի կանոնները՝ սույն հոդվածի պահանջների հաշվառմամբ:

Հոդված 86. Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարումը, դադարեցումը և կասեցումը

1. Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման դեպքերն են՝

1) լիազորությունների ժամկետն ավարտվելը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը.

3) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը կամ բրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելը.

4) նրան անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը.

5) նրա հրաժարականը.

6) նրա մահը.

7) դատավոր հանդիսանալու դեպքում՝ նրա լիազորությունների դադարեցումը կամ դադարումը:

2. Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարում են սույն օրենսգրքի 20-րդ գլխով սահմանված կանոններով:

3. Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) անհամատեղելիության պահանջները խախտելու դեպքում.

2) քաղաքական գործունեությամբ զբաղվելու դեպքում.

3) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան չորս ամիս անընդմեջ կամ ավելի քան վեց ամիս օրացուցային տարվա ընթացքում իր պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում, բացառությամբ մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում արձակուրդում լինելու հետ կապված պատճառներով, կամ ընտրվելուց հետո իր պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու դեպքում.

4) էական կարգապահական խախտում կատարելու դեպքում.

5) տարվա ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի նիստերին անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ չմասնակցելու դեպքում.

6) առնվազն մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելու կամ ձեռնպահ մնալու դեպքում, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված քվեարկությանը մասնակցությունը բացառող դեպքերի.

7) առնվազն մեկ անգամ Բարձրագույն դատական խորհրդի նիստին իր մասնակցությունը բացառող հանգամանքների մասին չհայտնելու դեպքում:

3.1 Սահմանադրությամբ կամ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները խախտելու հիմքով Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությամբ՝ Բարձրագույն դատական խորհուրդի որոշմամբ: ~~ներկայացրած եզրակացության հիման վրա~~:

Comment [ԱԺ40]: Լրացնել նշված բառերով:

Comment [ԱԺ41]: Կատարել նշված փոփոխությունը:

4. Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու հարցը լուծելու համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետում Բարձրագույն դատական խորհրդի նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի նիստ չհրավիրվելու դեպքում այն հրավիրվում է Բարձրագույն դատական խորհրդի առնվազն երեք անդամի կողմից:

5. Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է որոշում:

6. Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու դեպքում խորհրդի նախագահն անհապաղ դիմում է համապատասխանաբար Ազգային ժողով կամ Ընդհանուր ժողով՝ Բարձրագույն դատական խորհրդի նոր անդամ ընտրելու համար:

7. Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի լիազորությունները որպես դատավոր կասեցվելու դեպքում կասեցվում են նաև նրա՝ որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները:

8. Բարձրագույն դատական խորհրդի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամի լիազորությունները կասեցվում են նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու դեպքում:

Հոդված 90.Բարձրագույն դատական խորհրդի նիստերը

1. Բարձրագույն դատական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

2. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

3. Բարձրագույն դատական խորհրդի նիստերը հրավիրում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը՝ իր նախաձեռնությամբ, խորհրդի առնվազն երեք անդամների կամ դատարանի նախագահի պահանջով: Նախաձեռնողի կողմից առաջարկվում է օրակարգում ընդգրկվող հարցը:

4. Բարձրագույն դատական խորհրդի նիստերին խորհրդի նախագահի կամ անդամների առնվազն երեքի առաջարկությամբ կարող են հրավիրվել այլ անձինք:

5. Բարձրագույն դատական խորհրդի նիստերը դռնփակ են, եթե Բարձրագույն դատական խորհուրդը նիստերը դռնբաց անցկացնելու մասին որոշում չի կայացնում:

6. Որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք Բարձրագույն դատական խորհրդի անդամի կամ ~~դատավորի~~վարույթի մասնակցի միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանված որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով~~, կամ դատավորն այդպիսի միջնորդություն է ներկայացրել~~:

Comment [ԱԺ42]: Կատարել նշված փոփոխությունը:

Հոդված 94. Բարձրագույն դատական խորհրդի ակտերը և դրանց ընդունման կարգը

1. Բարձրագույն դատական խորհուրդը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենսգրքով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս ընդունում է որոշումներ:

2. Բարձրագույն դատական խորհրդի նիստին ներկա անդամները պարտավոր են կողմ կամ դեմ քվեարկել քննարկման դրվող յուրաքանչյուր հարցի շուրջ, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

3. Բարձրագույն դատական խորհուրդն իր քննարկման ենթակա հարցերի նախապատրաստման նպատակով, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հետ կապված այլ հարցերով ընդունում է աշխատակարգային որոշումներ: Աշխատակարգային որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ քվեարկությանը մասնակցած Բարձրագույն դատական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

4. Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի:

~~5. Դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները կազմելու և հաստատելու, նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին Հանրապետության նախագահին առաջարկելու դեպքերում Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ գաղտնի քվեարկությամբ:~~

~~6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ: Եթե քվեարկության արդյունքով որևէ որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով Բարձրագույն դատական խորհուրդը որոշում չի ընդունում, ապա համապատասխան միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված, իսկ որոշումը կազմում և ստորագրում են Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությունը մերժելու օգտին:~~

6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ իսկ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և

Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումները՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Եթե քվեարկության արդյունքով ~~որևէ որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով~~ Բարձրագույն դատական խորհուրդը որոշում չի ընդունում, ապա համապատասխան միջնորդությունը ~~մերժելու վերաբերյալ որոշումը~~ համարվում է ~~ընդունված~~մերժված, իսկ միջնորդությունը մերժելու մասին որոշումը կազմում և ստորագրում են Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությ~~ունը~~ան ~~մերժելու օգտին~~ընդունման~~ը~~ դեմ:

7. Բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի, Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանի ընդունած որոշումներն ստորագրում են նիստին ներկա բոլոր անդամները: Բարձրագույն դատական խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանի ընդունած որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասի վերաբերյալ: Եթե Բարձրագույն դատական խորհրդի անդամն ունի հատուկ կարծիք, ապա այդ մասին նրա ստորագրությամբ նշում է արվում Բարձրագույն դատական խորհրդի որոշման մեջ, և հատուկ կարծիքը նրա ստորագրությամբ կցվում է որոշմանը:

8. Բարձրագույն դատական խորհրդի անհատական որոշումներն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետում:

9. Բարձրագույն դատական խորհրդի որոշումները ենթակա են հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումները ենթակա են հրապարակման նույն կարգով՝ ապանձնավորած:

10. Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանի ընդունած որոշումները ենթակա են հրապարակման նաև Հայաստանի Հանրապետության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի հրապարակման համար նախատեսված կարգով:

Հոդված 121. Առաջին ատյանի դատարանի նախագահի նշանակման կարգը

1. Դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, իսկ այլ հիմքով առաջին ատյանի դատարանի նախագահի պաշտոնում թափուր տեղ առաջանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում Դատական դեպարտամենտը կազմում և Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում տվյալ առաջին ատյանի դատարանի բոլոր այն դատավորների ցուցակը, ովքեր ~~տվյալ դատարանում ունեն դատավորի ոչ պակաս, քան երեք տարվա փորձառություն,~~ ունեն դատավորի ոչ պակաս, քան երեք տարվա փորձառություն, չունեն կարգապահական տույժ, վերջին

Comment [Ա.Ժ43]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [Ա.Ժ44]: Կատարել նշված փոփոխությունը:

երեք տարվա ընթացքում չեն նշանակվել տվյալ դատարանի նախագահ և Բարձրագույն դատական խորհրդի անդամ չեն:

~~2. Տվյալ դատարանում դատավորի՝ ոչ պակաս, քան երեք տարվա փորձառություն ունեցող դատավորների թիվը երեքից պակաս լինելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ցուցակը կազմելիս դատավորի՝ տվյալ դատարանում առնվազն երեք տարվա փորձառություն ունենալու պահանջը չի կիրառվում:~~

2. Դատավորի՝ ոչ պակաս, քան երեք տարվա փորձառություն ունեցող դատավորների թիվը տվյալ դատարանում երեքից պակաս լինելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ցուցակը կազմելիս դատավորի՝ առնվազն երեք տարվա փորձառություն ունենալու պահանջը չի կիրառվում:

Comment [Ա.Ժ45]: 2-րդ մասը շարադրել նշված խմբագրությամբ:

3. Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է ներկայացված ցուցակում ընդգրկված դատավորների անձնական գործերը, անհրաժեշտության դեպքում հրավիրում նրանց զրույցի:

4. Բարձրագույն դատական խորհուրդն առաջին ատյանի դատարանի նախագահի նշանակման առաջարկություն ներկայացնելու հարցը քննարկելիս հաշվի է առնում դատարանի նախագահի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտություններն ու որակները բնութագրող հատկանիշները, այդ թվում՝

1) դատավորի մասնագիտական հեղինակությունը.

2) դատավորի պարտականությունները կատարելիս իր գործընկերների նկատմամբ դրսևորված վերաբերմունքը.

3) դատավորի կազմակերպչական և կառավարչական ունակությունները, կառավարչական բնույթի աշխատանքի փորձառության դեպքում՝ այդ աշխատանքում դատավորի ցուցաբերած հմտություններն ու որակները բնութագրող այլ հատկանիշներ:

5. Բարձրագույն դատական խորհուրդն անցկացնում է ~~գաղտնի~~ քվեարկություն, որի ընթացքում յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: ~~Քվեաթերթիկում ընդգրկվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ցուցակում ընդգրկված բոլոր անձինք:~~ Քվեարկության արդյունքներով Հանրապետության նախագահին է առաջարկվում խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնության ձայներն ստացած անձը:

6. Նշանակման ենթակա դատարանի նախագահի թեկնածուի՝ Հանրապետության նախագահին առաջարկումն իրականացվում է դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից տասնօրյա, իսկ այլ հիմքով պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ մեկամսյա ժամկետում:

7. Նշանակման ենթակա դատարանի նախագահի թեկնածուի՝ Հանրապետության նախագահին առաջարկումն ու նշանակումն իրականացվում է սույն օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 134. Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի նշանակման կարգը

1. Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնավարման ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, իսկ այլ հիմքով Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի թափուր տեղ առաջանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում Դատական դեպարտամենտը կազմում և Բարձրագույն դատական խորհրդին է ներկայացնում տվյալ պալատի բոլոր այն դատավորների ցուցակը, որոնք ~~տվյալ դատարանում ունեն ոչ պակաս, քան երեք տարվա դատավորի փորձառություն,~~ ունեն Վճռաբեկ դատարանի տվյալ պալատում դատավորի ոչ պակաս, քան երեք տարվա փորձառություն, չունեն կարգապահական տույժ, չեն պաշտոնավարել տվյալ պալատի նախագահի պաշտոնում և Բարձրագույն դատական խորհրդի անդամ չեն:

~~2. Վճռաբեկ դատարանում դատավորի ոչ պակաս, քան երեք տարվա փորձառություն ունեցող դատավորների թիվը երեքից պակաս լինելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ցուցակը կազմելիս դատավորի՝ Վճռաբեկ դատարանում առնվազն երեք տարվա փորձառություն ունենալու պահանջը չի կիրառվում:~~

2. Վճռաբեկ դատարանի տվյալ պալատում դատավորի՝ ոչ պակաս, քան երեք տարվա փորձառություն ունեցող դատավորների թիվը երեքից պակաս լինելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ցուցակը կազմելիս դատավորի՝ առնվազն երեք տարվա փորձառություն ունենալու պահանջը չի կիրառվում:

3. Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է ներկայացված ցուցակում ընդգրկված դատավորների անձնական գործերը, անհրաժեշտության դեպքում հրավիրում նրանց զրույցի:

4. Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի նշանակման առաջարկություն ներկայացնելու հարցը քննարկելիս հաշվի է առնում պալատի նախագահի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտություններն ու որակները բնութագրող հատկանիշներ, այդ թվում՝

1) դատավորի մասնագիտական հեղինակությունը.

2) դատավորի պարտականությունները կատարելիս իր գործընկերների նկատմամբ դրսևորած վերաբերմունքը.

3) դատավորի կազմակերպչական և կառավարչական ունակությունները, կառավարչական բնույթի աշխատանքի փորձառության դեպքում այդ աշխատանքում դատավորի ցուցաբերած հմտություններն ու որակները բնութագրող այլ հատկանիշներ:

5. Բարձրագույն դատական խորհուրդն անցկացնում է բաց~~գաղտնի~~ քվեարկություն, որի ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»:

~~6. Քվեաթերթիկում ընդգրկվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ցուցակում ընդգրկված բոլոր անձինք:~~

7. Քվեարկության ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: ~~Եթե քվեարկության մասնակիցն ավելի ձայն է տվել, քան սահմանված է սույն մասով, ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր:~~

Comment [ԱԺ46]: Կատարել նշված փոփոխությունը:

Comment [ԱԺ47]: 2-րդ մասը շարադրել նշված խմբագրությամբ:

8. Եթե քվեարկության արդյունքում որևէ թեկնածու չի ստացել ձայների կեսից ավելին, ապա անցկացվում է լրացուցիչ քվեարկություն, որին մասնակցում են առավել ձայներ ստացած երկու թեկնածուները:

9. Եթե ձայների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել առավել ձայներ ստացած երկու թեկնածուներին, ապա նախապատվությունը տրվում է դատավորի առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին, իսկ փորձառության հավասարության դեպքում՝ տարիքով ավագին:

10. Լրացուցիչ քվեարկության ժամանակ Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Լրացուցիչ քվեարկության ժամանակ ձայների թվի կեսից ավելին ստացած թեկնածուն համարվում է ընտրված: Եթե ոչ մեկը չի ստացել քվեարկության մասնակիցների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ, ապա անցկացվում է նոր ընտրություն:

11. Քվեարկության արդյունքներով Հանրապետության նախագահին է առաջարկվում Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնության «կողմ» ձայներ ստացած թեկնածուն:

12. Նշանակման ենթակա Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի թեկնածուի՝ Հանրապետության նախագահին առաջարկումն ու նշանակումն իրականացվում են սույն օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 138. Դատավորների գործունեության գնահատման չափանիշները

1. Դատավորների գործունեությունը գնահատվում է դատավորի աշխատանքի որակն ու արդյունավետությունը, ինչպես նաև դատավորի արհեստավարժությունն ու վարքագիծը բնութագրող սույն հոդվածով սահմանված չափանիշների հիման վրա~~, եթե հնարավոր է տվյալ դատավորի գնահատումն իրականացնել այդ չափանիշների հիման վրա~~:

2. Դատավորի աշխատանքի որակի և արհեստավարժության գնահատման չափանիշներն են՝

1) դատական ակտը հիմնավորելու կարողությունը.

2) դատական նիստը կառավարելու և օրենքով սահմանված կարգով անցկացնելու կարողությունը:

3. Դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշներ ն են՝

1) աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակությունը և աշխատանքի պլանավորումը.

2) ողջամիտ ժամկետում գործեր քննելն ու դատական ակտեր կայացնելը.

3) դատավորի կողմից առանձին դատավարական գործողությունների կատարման համար օրենքով սահմանված ժամկետների պահպանումը.

4) արդյունավետ աշխատամիջավայր ապահովելու կարողությունը:

4. Դատավորի էթիկայի և վարքագծի կանոնի գնահատման չափանիշ ներն են՝

1) վարքագծի և էթիկայի կանոնների պահպանումը.

Comment [ԱԺ48]: Նշված բառերը հանել:

2) դատարանի հանրային ընկալմանն ու դատարանի նկատմամբ վստահությանը նպաստելը, այլ դատավորների և դատարանի աշխատակազմի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը:

5. Սույն հոդվածով սահմանված գնահատման չափանիշներով գնահատման համար հանձնաժողովը պետք է հաշվի առնի դատավորի բննած գործերի առնվազն 10 դատական նիստի ձայնային արձանագրություններ (բացակայության դեպքում՝ պարզ թղթային արձանագրություններ) և առնվազն 10 գործն ըստ էության լուծող դատական ակտեր (պատահական ընտրությամբ):

Հոդված 139. Դատավորների գործունեության գնահատման կարգը

1. Դատավորների ~~գործունեության գնահատումն իրականացնում է~~ գործունեությունը գնահատում է Բարձրագույն դատական խորհուրդը՝ Դդատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի՝ի եզրակացությամբ: ~~սույն օրենսգրքով սահմանված չափանիշների հիման վրա~~:

2. Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը՝ ներառյալ սույն օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատման ցուցիչները, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորների գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները:

3. Դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը սահմանելիս դատավորի գործունեության գնահատման համար առաջնահերթություն է տրվում սույն օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված չափանիշներին, որոնք դատավորին տրվող գնահատականի ձևավորման համար ունեն որոշիչ նշանակություն:

4. Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների գործունեությունը գնահատելու հերթական ժամանակացույցը՝ ըստ համապատասխան տարիների և դատավորների:

Հոդված 140. Դատավորների գործունեության գնահատման արդյունքների ամփոփումը

1. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը Գգնահատման արդյունքների վերաբերյալ կազմվում է ~~որոշման~~ եզրակացության նախագիծ, որը ներառում է գնահատման արդյունքի ամփոփագիր:

2. Գնահատման արդյունքների վերաբերյալ ~~որոշման~~եզրակացության նախագիծն ուղարկվում է դատավորին, որն իրավունք ունի այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում ներկայացնելու նախագծի վերաբերյալ իր նկատառումները:

3. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովն ուսումնասիրում է գնահատման արդյունքների վերաբերյալ դատավորի նկատառումները և ~~որոշում կայացնում~~ ընդունում է գնահատման արդյունքների վերաբերյալ եզրակացություն:

4. ~~Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը~~ Բարձրագույն դատական խորհուրդը ~~գնահատման ընդհանուր արդյունքների~~դատավորների

Comment [ԱԺ49]: Կատարել նշված փոփոխությունները՝ դատավորների գործունեության գնահատման վերջնական որոշման իրավունքը վերապահելով Բարձրագույն դատական խորհրդին:

Comment [ԱԺ50]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [ԱԺ51]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [ԱԺ52]: Կատարել նշված փոփոխությունները:

գործունեության գնահատման հանձնաժողովի եզրակացության հիման վրա դատավորների գործունեությունը գնահատում է բարձր, լավ, միջին կամ ցածր՝ հիմք ընդունելով ~~Բարձագույն դատական խորհրդի~~ իր կողմից սահմանված գնահատման սանդղակները, որոնք, ի թիվս այլնի, ներառում են յուրաքանչյուր չափանիշով դատավորի գործունեության գնահատման ցուցիչները, յուրաքանչյուր ցուցիչով միավորը որոշելու մեթոդը, միավորների առավելագույն չափը, ինչպես նաև տվյալ ցուցիչով դատավորի գործունեության գնահատման հիմք հանդիսացող փաստաթղթավորված տվյալների շրջանակը և դրանք հավաքելու կարգը:

5. Դատավորի գործունեության գնահատականը ձևավորվում է գնահատման բոլոր չափանիշներով ~~հանձնաժողովի~~Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամի կողմից դատավորին նշանակված գնահատականների միջինով:

6. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի և Բարձրագույն դատական խորհրդի դատավոր ~~անդամը~~անդամները ~~չի~~չեն մասնակցում իրենց գործունեության գնահատմանը և արդյունքների ամփոփմանը:

Հոդված 140.1. Դատավորների գործունեության գնահատման հետևանքները

1. Գնահատման ընդհանուր արդյունքներով դատավորի գործունեությունը ցածր կամ միջին գնահատվելու դեպքում ~~Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը~~Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորին լրացուցիչ վերապատրաստման ուղարկելու մասին՝ սահմանելով այն չափանիշները, որոնցով նրա հմտությունները կատարելագործվելու անհրաժեշտություն ունեն:

2. Գնահատման ընդհանուր արդյունքներով ցածր կամ միջին գնահատված դատավորի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լրացուցիչ վերապատրաստումն անցնելուց հետո եռամսյա ժամկետում կազմակերպվում է արտահերթ գնահատում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արտահերթ գնահատման դեպքում սույն օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատումն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված կարգով:

4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի կողմից դատավորի գործունեության գնահատման եզրակացության արդյունքում սույն օրենսգրքի 142-րդ հոդվածով նախատեսված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր հայտնաբերելու դեպքում հանձնաժողովը դիմում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:

Հոդված 142. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը

Comment [ԱԺ53]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [ԱԺ54]: Կատարել նշված փոփոխությունը:

Comment [ԱԺ55]: Կատարել նշված փոփոխությունը:

Comment [ԱԺ56]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [ԱԺ57]: Կատարել նշված փոփոխությունը:

Comment [ԱԺ58]: Կատարել նշված լրացումը:

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ~~ակնհայտ և կոպիտ~~ խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ..

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները ~~կոպիտ~~ խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

3) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի պարտականությունները խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

~~3) դատավորի կողմից օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունը չկատարելը.~~

~~4) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ միջամտության մասին Բարձրագույն դատական խորհրդին չհայտնելը:~~

~~2. Սույն գլխի իմաստով՝ ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:~~

2. Արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:

~~3. Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի այն խախտումը, որը հեղինակազրկում է դատական իշխանությունը: Կոպիտ է նաև դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակազրկում է դատական իշխանությանը:~~

4. Սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

5. Սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

~~6. Էական կարգապահական խախտում է՝~~

Comment [Ա59]: Կատարել նշված լրացումը: Հիմնավորումները, տես՝ մյուս նկատառումներում:

~~1) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը կամ~~

~~2) դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:~~

6. Էական կարգապահական խախտում է՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ~~խախտումը~~արարքը, որը հանգեցրել է ~~Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝~~ մարդու իրավունքների և ~~(կամ)~~ ազատությունների հիմնարար խախտման և խաթարում է արդարադատության բուն էությունը ~~կամ հեղինակազրկում է դատական իշխանությունը~~.

2) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ~~խախտումը~~արարքը, որը դրսևորվել է սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-9-րդ, 11-12-րդ~~, 15-16-րդ~~ կետերով ~~և~~կամ 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-8-րդ, ~~11-րդ,~~ 13-14-րդ ~~և~~կամ 18-րդ կետերով նախատեսված դատավորի ~~պարտականությունների~~վարքագծի կանոնների խախտմամբ, և պայմանավորված կատարման հանգամանքներով ~~և (կամ)~~ կամ առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ.

3)սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արարքը, որը դրսևորվել է սույն օրենսգրքի ... - նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ, և պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ..

~~3)~~4) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը :

7. Դատական ակտի բեկանումը կամ փոփոխումը ինքնին հիմք չէ այդ ակտը կայացրած դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

8. Դատավորին վարչական, քաղաքացիաիրավական կամ օրենքով նախատեսված այլ պատասխանատվության ենթարկելը չի բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա լիազորությունները դադարեցնելու հնարավորությունը և հակառակը:

9. Արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

10. Դատավորը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:

Հոդված 144. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետները

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի

Comment [ԱԺ60]: Կատարել նշված փոփոխությունները, հաշվի առնելով՝
1.Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը:
2.ԴՕ 29-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ նախագծով փոփոխվող՝ սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը, ուստի բոլոր, այդ թվում՝ էական կարգապահական խախտումներն էլ ենթադրում են դատական իշխանության հեղինակազրկում և առանձին դեպքում նշելը նպատակահարմար չէ:

Comment [ԱԺ61]: Կատարել նշված փոփոխությունները: Մանրամասները, տես՝ ԴՕ 145-րդ հոդվածի վերաբերյալ նկատառումը:

Comment [ԱԺ62]: Լրացնել առաջարկվող՝ 3-րդ կետով: Թվարկվող մասերում(կոնկերետ հոդումները պայմանավորված են առաջարկի ընդունամն դեպքում ԴՕ-ում կատարված փոփոխություններից) կարող են ընդգրկվել նաև ԴՕ 69-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ և 16-րդ կետերը:

դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ ~~Լիազոր մարմնի~~ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմնի կողմից խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ ~~Լիազոր մարմնի~~ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմնի կողմից խախտումը հայտնաբերելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց մեկ տարի հետո~~՝ բացառությամբ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտումների~~.

3) դատավորի կողմից սույն օրենսգրքի ~~69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ~~.. հոդվածի ... մասերով~~ կետերով~~ նախատեսված ~~վարքագծի կանոնները~~ պարտականությունը դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ ~~խախտելու~~ չկատարելու հիմքով՝ ~~Լիազոր մարմնի~~ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմնի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց երեք տարի հետո:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը հայտնաբերվել է մինչև տվյալ գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ապա նույն կետով նախատեսված մեկ տարվա ժամկետը հաշվարկվում է տվյալ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից, իսկ եթե դատավորի կողմից թույլ են տրվել դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցնում են դատական պաշտպանության իրավունքի խախտման և արդարադատության խաթարման, ապա վարույթ կարող է հարուցվել մինչև տվյալ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Comment [ԱԺ63]: Կատարել նշված փոփոխությունը, հաշվի առնելով որ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությունը միայն լիազոր մարմնին չէ վերապահված:

Comment [ԱԺ64]: Նույնը:

Comment [ԱԺ65]: Նշված բառերը հանել:

Comment [ԱԺ66]: Կատարել նշված փոփոխությունները: Մանրամասները տես՝ ԴՕ 145-րդ հոդվածի վերաբերյալ նկատառումներում:

Հոդված 145. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինները

1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

1) ~~Կարգապահական հարցերի հանձնաժողով~~ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը.

2) Լիազոր մարմինը:

~~3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1.-ին կետով նախատեսված դեպքերում:~~

~~1.1. Սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ կարգապահական վարույթ կարող է հարուցել միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝~~

~~«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքով սահմանված դեպքերում և կարգով:~~

2. Կարգապահական վարույթ հարուցող մարմինը (այսուհետ՝ վարույթ հարուցող մարմին) վարույթ հարուցելու, այն կասեցնելու, վերսկսելու և կարճելու որոշումները կայացնելու պահից եռօրյա ժամկետում ուղարկում է վարույթ հարուցող մյուս մարմնին, ինչպես նաև հաղորդում ներկայացրած անձին և համապատասխան դատավորին:

Հոդված 146. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթները

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

1) անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը.

2) կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները.

3) վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

4) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

2. Անանուն հաղորդումները քննարկման ենթակա չեն:

3. Վարույթ հարուցող մարմինը մինչև դրա հարուցման հարցի լուծումն իրավունք ունի հաղորդում ներկայացրած անձին առաջարկելու ներկայացնել կարգապահական վարույթ հարուցելու համար նշանակություն ունեցող տեղեկությունների վերաբերյալ նյութեր:

~~4. Կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկվում է այն հարուցելու առիթը վարույթ հարուցող մարմնին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում, իսկ փորձաքննություն նշանակվելու դեպքում՝ փորձաքննության կատարման համար անհրաժեշտ ժամկետով:~~

4. Վարույթ հարուցող մարմինը կատարված ուսումնասիրությունների արդյունքում կայացնում է կարգապահական վարույթ հարուցելու կամ չհարուցելու մասին որոշում՝ :

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված անձի հաղորդման հիման վրա կարգապահական վարույթ չհարուցելու ~~երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկելով հաղորդում ներկայացրած անձին~~ դեպքում վարույթ հարուցող մարմինն~~ն~~՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է հաղորդում ներկայացրած անձին՝ իր պատասխանում ~~նշում է~~ նշելով վարույթ չհարուցելու հիմքերը:

6. Կարգապահական վարույթ չի հարուցվում, եթե՝

Comment [Ա67]: Առաջարկվում է նշված մասերը հանել և սահմանել առանձին ընթացակարգով, հաշվի առնելով հետևյալ սկզբունքները՝
1.ԴՕ 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված կանոնները սահմանվում են որպես դատավորի պարտականություն (տես՝ Վենետիկի հանձնաժողովի եզրակացության 51-րդ կետ):
2.Նշված պարտականությունները չկատարելու դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմնված կարգով հարուցում է վարույթ, որի արդյունքում ընդունում է եզրակացություն (տես՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 5-րդ գլուխ) :
3.Եթե եզրակացության համապատասխան դատավորը չի կատարել նշված պարտականությունները, ապա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Բարձրագույն դատական խորհրդին ներկայացնում է եզրակացություն խախտման առկայության մասին (տես՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մաս):
4.Բարձրագույն դատական խորհուրդը եզրակացությանը համապատասխան՝ դատավորին ենթարկում է կարգապահական պատասխանատվության կամ նրա լիազորությունները դադարեցնում է:

Comment [Ա68]: Կատարել նշված փոփոխությունները:

1) նույն դատավորի նկատմամբ նույն արարքի համար առկա է վարույթ հարուցող նույն մարմնի կողմից հարուցված կարգապահական վարույթ.

2) նույն դատավորի նկատմամբ նույն արարքի համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ առկա է նույն մարմնի կարգապահական վարույթ չհարուցելու կամ վարույթը կարճելու վերաբերյալ որոշում.

3) նույն դատավորի նկատմամբ նույն արարքի համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ առկա է Բարձրագույն դատական խորհրդի որոշում:

4) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են:

Հոդված 147. Դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքը

1. Հարուցված կարգապահական վարույթի տևողությունը մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելը չի կարող ~~վեց շաբաթից~~ երկու ամսից ավելի լինել:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը կարող է վարույթ հարուցող մարմնի որոշմամբ դատավորի բացակայության (արձակուրդ, անաշխատունակություն, գործուղում, բացառությամբ այլ դատարան գործուղվելու և այլն) ժամանակահատվածով կարող է երկարաձգվել: Դատավորի բացակայության հիմքերի և ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվությունը վարույթ հարուցող մարմնին տրամադրում է համապատասխան դատարանի նախագահը:

3. Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում վարույթ հարուցող մարմինն իրավունք ունի՝

1) դատարանից պահանջելու և ուսումնասիրելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով քրեական, քաղաքացիական կամ ցանկացած այլ գործի նյութեր.

2) դատարանում ծանոթանալու քրեական, քաղաքացիական կամ ցանկացած այլ գործի նյութերի, որոնց վերաբերյալ դեռևս չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ՝ չմիջամտելով արդարադատության կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման գործընթացին.

3) դատավորին առաջարկելու ներկայացնել գրավոր բացատրություններ.

4) առաջարկելու հաղորդում ներկայացրած անձին~~, ֆիզիկական և իրավաբանական անձանց~~ ներկայացնել կարգապահական վարույթի համար նշանակություն ունեցող ~~տեղեկությունների~~ տեղեկություններ և նյութեր վերաբերյալ նյութեր.

5) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու նյութեր:

4. Դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, իրավունք ունի՝

Comment [Ա69]: Նշված բառերը հանել:

1) ներկայացնելու գրավոր բացատրություններ, ապացույցներ և անելու միջնորդություններ.

2) վարույթ հարուցող մարմնից ստանալու կարգապահական վարույթի նյութերի պատճենները.

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված իրավունքները իրականացնելու անձամբ կամ փաստաբանի միջոցով:

5. Կատարված ուսումնասիրությունների արդյունքում վարույթ հարուցած մարմինը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) կարգապահական վարույթը կարճելու մասին.

2) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին:

6. Վարույթ հարուցած մարմինը կարճում է կարգապահական վարույթը, եթե՝

1) առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.

2) վարույթ հարուցած նույն մարմինը նախկինում նույն արարքի համար նույն անձի նկատմամբ չի հարուցել կարգապահական վարույթ կամ կարճել է հարուցված կարգապահական վարույթը.

3) նույն արարքի համար նույն անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին նախկինում միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ.

4) առկա է նույն կարգապահական խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշում.

5) դադարեցվել կամ դադարել են դատավորի լիազորությունները:

6) առկա է սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմք:

7. Նույն հիմքով նույն դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցված լինելու դեպքում ավելի ուշ վարույթ հարուցած մարմինը որոշում է կայացնում կարգապահական վարույթը կասեցնելու մասին: Կարգապահական վարույթը կասեցնելու օրվանից մինչև դրա վերսկսումը սույն հոդվածով սահմանված կարգապահական վարույթի ժամկետը կասեցվում է:

8. Վարույթ հարուցող մյուս մարմնի կողմից կարգապահական վարույթը կարճվելու կամ Բարձրագույն դատական խորհրդի կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու մասին որոշումն ստանալու օրը վարույթը կասեցրած մարմինը վերսկսում է կասեցված կարգապահական վարույթը: Բարձրագույն դատական խորհրդի կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու մասին որոշման հիմքով վարույթը վերսկսելու դեպքում վարույթ հարուցող մարմինը կարճում է այն:

9. Վարույթ հարուցող մարմինը պարտավոր է ապահովել կարգապահական վարույթի գաղտնիությունը: Կարգապահական վարույթի շրջանակներում առաքվող բոլոր փաստաթղթերը պետք է առաքվեն փակ ծրարներով՝ «ծառայողական» դրոշմագրով: Կարգապահական վարույթի նյութերը սույն օրենսգրքով չնախատեսված անձանց տրամադրելն արգելվում է:

10. Մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելը վարույթ հարուցող մարմնի և համապատասխան դատավորի միջև կարգապահական վարույթի վերաբերյալ բանավոր քննարկումներ չեն կարող լինել:

Հոդված 149. Դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելու արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը.

1) նախազգուշացում.

2) նկատողություն.

3) խիստ նկատողություն.

3.1) առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական և արտահերթ համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք՝ երեքմեկ տարի ժամկետով:

~~3.2) դատարանի նախագահի, կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատում:~~

4) էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում:

~~1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 3.2.-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը չի կարող կիրառվել սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելիս:~~

1.1. Դատարանի նախագահին կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահին՝ իր պաշտոնեական պարտականությունները չկատարելու կապակցությամբ, պատասխանատվության ենթարկելու հարցը քննելու արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կարող է նրա նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը.

1) նախազգուշացում.

2) նկատողություն.

3) խիստ նկատողություն.

4) դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատում:

2. Դատավորի, Դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

3. Եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք կիրառելու կամ,

Comment [Ա.Ժ70]: Լրացնել նշված բառերով՝ հաշվի առնելով սույն հոդվածը 1.1-ին մասը նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ ստորև ներկայացվող առաջարկը:

Բացի այդ, եթե այս և ստորև ներկայացվող առաջարկները, ինչպես նաև ԴՕ 35-րդ հոդվածի առաջարկներն ընդունվում են, ապա ԴՕ-ում կարգապահական պատասխանատվության ենթարկելուն վերաբերող մյուս բոլոր հոդվածներում, ըստ անհրաժեշտության պետք ավելացնել նույն բառերը կամ կատարել համապատասխան փոփոխություններ (տարանջատել դատավորին և դատարանի նախագահին կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացները, քանի որ դրանք, մեր կարծիքով, տարբեր են):

Comment [Ա.Ժ71]: Կատարել նշված փոփոխությունը:

Comment [Ա.Ժ72]: Կետը հանել:

Comment [Ա.Ժ73]: 1.1-ին մասը շարադրել նշված խմբագրությամբ:

Comment [Ա.Ժ74]: Լրացնել նշված բառերով:

~~դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատվելու կամ,~~ խիստ նկատողություն ստանալու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, նկատողություն ստանալու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կամ նախազգուշացում ստանալու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, դատավորը չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության, ապա նա համարվում է կարգապահական տույժ չունեցող:

Հոդված 151. Բարձրագույն դատական խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքը

1. Բարձրագույն դատական խորհրդում հարցի քննությունն սկսվում է հարցի էության և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդության վերաբերյալ վարույթ հարուցած անձի զեկուցմամբ: Եթե դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցել է Լիազոր մարմինը, ապա ~~վերջինս,~~Լիազոր մարմնի ղեկավարը ~~կամ տեղակալը~~ պարտավոր է ներկա լինել Բարձրագույն դատական խորհրդի նիստին: Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, ապա Բարձրագույն դատական խորհրդի նիստին կարգապահական խախտման մասին միջնորդությունը զեկուցում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նախագահը կամ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի հանձնարարությամբ՝ դրա անդամներից մեկը: Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից, ապա Բարձրագույն դատական խորհրդի նիստին կարգապահական խախտման մասին միջնորդությունը զեկուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հանձնարարությամբ՝ դրա անդամներից մեկը:

2. Այն դեպքում, երբ կարգապահական վարույթի նյութերը Բարձրագույն դատական խորհուրդ ուղարկելուց հետո վարույթ հարուցած մարմնին հայտնի են դարձել հանգամանքներ, որոնք բարելավում են դատավորի վիճակը կամ բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելը, վարույթ հարուցած մարմինը պարտավոր է այդ մասին հայտնել Բարձրագույն դատական խորհրդին:

3. Վարույթ հարուցած մարմնի զեկուցումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է այն դատավորին, որի նկատմամբ վարույթ է հարուցվել: Բարձրագույն դատական խորհրդի անդամները և վարույթը հարուցած մարմնի ներկայացուցիչը կարող են հարցեր ուղղել դատավորին, որոնց վերջինս կարող է պատասխանել կամ հրաժարվել դրանց պատասխանելուց: Դատավորին լսելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը -անցնում է վարույթի նյութերի հետազոտմանը:

4. Հարցի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի՝

1) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատավորից, կարգապահական վարույթը հարուցած մարմնից,

Comment [Ա75]: Նշված բառերը հանել:

Comment [Ա76]: Կատարել նշված փոփոխությունները:

պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջել ներկայացնել հարցի քննության համար ապացուցողական ~~նշանակություն~~ նշանակություն ունեցող ~~ապացույցներ~~տեղեկություններ, որոնք գտնվում են տվյալ անձանց ազդեցության ոլորտում՝ սահմանելով ժամկետ դրանք Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու համար, իսկ որոշումը կամովին չկատարելու դեպքում այն ներկայացնել կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

2) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ հրավիրել վկաներ,

3) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ նշանակել փորձաքննություն՝ քննության համար նշանակություն ունեցող հարցերի պարզաբանման նպատակով:

5. Վկաների չներկայանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու վկային հարկադրաբար ներկայացնելու վերաբերյալ: Հարկադրաբար ներկայացնելու վերաբերյալ որոշումը կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Բարձրագույն դատական խորհուրդը գործով ցուցմունք տվող անձանց նախազգուշացնում է ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու, իսկ փորձագետին՝ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

7. Հարցի քննության համար հրավիրված վկային առաջինը հարցեր է տալիս այն կողմը, որի միջնորդությամբ հրավիրվել է վկան, ապա մյուս կողմը, իսկ վերջում՝ Բարձրագույն դատական ~~խորհուրդը~~ խորհրդի անդամները: Եթե վկան հրավիրվել է Բարձրագույն դատական խորհրդի նախաձեռնությամբ, ապա առաջինը հարցեր է տալիս Բարձրագույն դատական խորհուրդը, այնուհետև կողմերը՝ ըստ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած հերթականության:

8. Վկան իրավունք ունի հրաժարվել ցուցմունք տալ առանձին հարցերի վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր, իր ամուսնու կամ իր մերձավոր ազգականի դեմ:

9. Վարույթի նյութերի հետազոտումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է նիստին մասնակցող անձանց ամփոփիչ ելույթները, որից հետո հարցի քննությունը հայտարարվում է ավարտված: Հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո Բարձրագույն դատական ~~խորհուրդը~~խորհրդի նիստը նախագահողը հայտարարում է որոշման հրապարակման օրը, վայրը և ժամը:

10. Հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը հեռանում է որոշում կայացնելու:

Հոդված 156.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական

Comment [Ա77]: Կատարել նշված փոփոխությունները

Comment [Ա78]: Հստակեցնել վկայի կարգավիճակը:

Comment [Ա79]: Կատարել նշված փոփոխությունը:

Comment [Ա80]: Կատարել նշված փոփոխությունը:

պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը բողոքարկելը

Comment [Ա81]: Լրացնել նշված բառերով:

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ համապատասխանաբար դատավորի կամ կարգապահական վարույթ հարուցած մարմնի բողոքը քննում է Բարձրագույն դատական խորհուրդը, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա:

2. Բարձրագույն դատարան խորհուրդը բողոքը ստանալուց հետո այն անմիջապես ուղարկում է մյուս կողմին, որը կարող է Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնել բողոքի պատասխան այն ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

3. Բարձրագույն դատական խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ ներկայացված բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունն իրականացնել նիստում: Բողոքը դատական նիստում քննելու մասին կայացվում է որոշում:

4. Բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում կողմերը ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար: Բողոքի քննությունը դատական նիստում սկսվում է հարցը զեկուցող անդամի զեկուցումով, ով ներկայացնում է բողոքը և բողոքի պատասխանի փաստարկները: Բարձրագույն դատական խորհրդի անդամներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին և նիստին ներկայացած կողմերին, որից հետո բողոքի քննությունը հայտարարվում է ավարտված:

5. Բողոքի քննության ժամանակ Բարձրագույն դատական խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

6. Բողոքի քննությունը կատարվում և որոշումը կայացվում է բողոքը ստանալուց հետո երկամսյա ժամկետում:

7. Բողոքի քննության արդյունքներով Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է բողոքարկվող որոշումն անփոփոխ թողնելու կամ որոշումը մասնակի կամ ամբողջությամբ վերացնելու մասին որոշում: Որոշումն ընդունվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

Comment [Ա82]: Լրացնել նշված նախադասությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Հոդված 9. Հանձնաժողովի կազմավորման կարգը

1. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ նախագահ և չորս անդամ: Հանձնաժողովի անդամների պաշտոնները ինքնավար պաշտոններ են:

2. Հանձնաժողովի անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Ազգային ժողովը՝ վեց տարի ժամկետով, բացառությամբ Հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման դեպքերի:

3. Հանձնաժողովն իր կազմից Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետով ընտրում է Հանձնաժողովի նախագահ:

~~4. Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի այն մարմինը, որին վերապահվել է Հանձնաժողովի առաջին կազմի տվյալ անդամի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի:~~

~~4. Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար Ազգային ժողովի նախագահը ձևավորում է մրցութային խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ բացառությամբ Հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման դեպքերի:~~

~~5. Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուն առաջադրվում է Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարելու մասին սույն օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով տեղեկացվելուց, Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվելուց, ինչպես նաև Հանձնաժողովի անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չընդունվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:~~

~~5. Խորհուրդը կազմված է Կառավարության, Ազգային ժողովի, Բարձրագույն դատական խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի և Փաստաբանների պալատի կողմից նշանակված մեկական անդամներից: Խորհրդի անդամ կարող է նշանակվել սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին բավարարող անձը: Խորհրդի կազմում ընդգրկվելու համար Ազգային ժողովի նախագահը դիմում է Կառավարությանը, Ազգային ժողովին, Բարձրագույն դատական խորհրդին, Մարդու իրավունքների պաշտպանին և Փաստաբանների պալատին՝ յուրաքանչյուրի կողմից տասնօրյա ժամկետում մեկական թեկնածու առաջադրելու համար:~~

~~6. Եթե Կառավարությանը, Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը կամ Բարձրագույն դատական խորհրդին վերապահված՝ Հանձնաժողովի անդամի թափուր~~

պաշտոնում սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա նույն մարմինն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:

6. Եթե Կառավարությանը, Ազգային ժողովին, Բարձրագույն դատական խորհրդին, Մարդու իրավունքների պաշտպանին և Փաստաբանների պալատին՝ վերապահված՝ Խորհրդի կազմում ներգրավվելու նպատակով սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա նույն մարմինը թեկնածու առաջադրում է տասնօրյա ժամկետում:

7. Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա Ազգային ժողովի կառավարող խմբակցությունն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:7. Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված Խորհրդի անդամի թափուր պաշտոնում սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա Ազգային ժողովի կառավարող խմբակցությունն այդ նպատակով թեկնածու առաջադրում է տասնօրյա ժամկետում:

8. Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում նշանակումը կատարվում է այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Հանձնաժողովի անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվում, ապա նույն մարմնի կողմից այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է: Ազգային ժողովի նախագահը սույն հոդվածով սահմանված կարգով՝ 10-օրյա ժամկետում դիմում է իրավասու մարմիններին՝ նոր մրցութային խորհուրդ ձևավորելու նպատակով:

9. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի թեկնածուի ընտրության համար ձևավորվում է նոր Խորհուրդ, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցույթը կազմակերպվում է Հանձնաժողովի մեկից ավելի թափուր պաշտոններ համալրելու նպատակով, որի պարագայում մրցույթն անցկացվում է միևնույն Խորհրդի կողմից:

Հոդված 10.1. Խորհրդի գործառույթները և գործունեության կազմակերպումը

1. Խորհուրդը՝

1) ապահովում է մրցույթի անցկացման պայմանների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը.

2) համադրում է թեկնածուի համապատասխանությունը սույն օրենքով նախատեսված պահանջներին (փաստաթղթերի գնահատման փուլ).

3) փաստաթղթերի գնահատման փուլի արդյունքում ընտրում է հարցազրույցի փուլ անցած թեկնածուների: Վերջիններիս ընտրելիս ուսումնասիրվում է նաև նրանց կողմից բարեվարքության պահպանումը.

4) հարցազրույցի փուլի ընթացքում բաց քվեարկության արդյունքում ընտրում է ներկայացվող պահանջներին առավելագույնս համապատասխանող 5 թեկնածու:

5) կազմում և Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը՝ դրանում ներառելով Հանձնաժողովի անդամների թափուր պաշտոնների քանակին հավասար թվով հաղթողներ՝ յուրաքանչյուր թափուր պաշտոնի համար մեկ թեկնածու սկզբունքով:

6) մրցույթի կազմակերպմանն ու անցկացմանը վերաբերող հարցերի կապակցությամբ ընդունում է որոշումներ, այդ թվում՝ ներկայացված փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը պարզելու, ինչպես նաև հավելյալ տեղեկություններ ստանալու վերաբերյալ:

2. Խորհրդի նիստն իրավազոր է Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնությանմասնակցության դեպքում: Նիստը վարում է Խորհրդի՝ նիստին մասնակցող տարիքով ավագ անդամը:

3. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդն իր նիստերը հրավիրում է Ազգային ժողովի նստավայրում:

4. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

Հոդված 10.2. Մրցույթի անցկացումը

1. Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով (սույն հոդվածում այսուհետ՝ աշխատակազմ) մրցույթը հայտարարում է Հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 90, և ոչ ուշ, քան 50 օր առաջ, իսկ նրա պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ 30 օրվա ընթացքում:

2. Հայտարարությունը հրապարակվում է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների, Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքերում (այսուհետ՝ պաշտոնական կայքեր):

3. Հայտարարությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները.

1) թեկնածուներին ներկայացվող պահանջները.

2) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

3) մրցույթի անցկացման պայմանները, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը.

4) փաստաթղթերը ներկայացնելու ժամկետը և վայրը:

4. Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը (այսուհետ՝ հավակնորդ) հայտարարության հրապարակմանը հաջորդող 20 օրվա ընթացքում աշխատակազմ է ներկայացնում մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր), ինչպես նաև իր բնակության և էլեկտրոնային փոստի հասցեները:

5. Փաստաթղթերը կարող են հանձնվել առձեռն կամ ուղարկվել փոստով:

6. Փաստաթղթերն ընդունելու նպատակով աշխատակազմում վարվում է համապատասխան գրանցամատյան:

7. Փոստով ուղարկված փաստաթղթերը համարվում են սահմանված ժամկետում ներկայացված, եթե աշխատակազմը դրանք ստացել է մինչև սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետը լրանալը:

8. Փոստով ուղարկված փաստաթղթերի ստացման վերաբերյալ հավակնորդը ծանուցվում է փաստաթղթերն ստանալուն հաջորդող մեկ օրվա ընթացքում՝ իր ներկայացրած էլեկտրոնային փոստի հասցեով:

9. Փաստաթղթերի թերությունները հավակնորդը կարող է վերացնել փաստաթղթերը ներկայացնելու համար սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետը լրանալուն հաջորդող երեք օրվա ընթացքում:

10. Մրցույթն անցկացվում է երկու փուլով, որոնցից առաջինը փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգման (այսուհետ՝ փաստաթղթային ստուգման) փուլն է, երկրորդը՝ հարցազրույցի:

11. Մրցույթի փաստաթղթային ստուգման փուլում հանձնաժողովը ստուգում է փաստաթղթերի ամբողջականությունը, դրանց համապատասխանությունն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին, իսկ ողջամիտ կասկածի դեպքում՝ նաև փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը: Հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը հանձնաժողովի որոշման հիման վրա պարզվում է աշխատակազմի միջոցով: Հանձնաժողովի որոշման հիման վրա աշխատակազմի միջոցով ստացվում են նաև թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատմանը

~~վերաբերող հավելյալ տեղեկություններ: Խորհրդի տեղեկացմամբ հավակնորդը կարող է մասնակցել փաստաթղթային ստուգման փուլին:~~

~~12. Փաստաթղթերի թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքում հավակնորդին այդ մասին ծանուցում է աշխատակազմը մեկ օրվա ընթացքում՝ իր ներկայացրած էլեկտրոնային փոստի հասցեով:~~

~~13. Սույն հոդվածի 11-րդ մասում նշված գործողությունների արդյունքներով՝ Խորհուրդը կազմում է հարցազրույցի փուլ անցած անձանց ցուցակը: Խորհուրդը հարցազրույցի մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի անցկացման օրը, ժամը և վայրը հրապարակում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:~~

~~Հոդված 10.3. Մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը Ազգային ժողովի նախագահին ներկայացնելը~~

~~1. Խորհուրդը ցուցակը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին ցուցակի հրապարակմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:~~

~~2. Ցուցակին կից ներկայացվում են Խորհրդի նիստերի արձանագրությունները, մրցույթի ընթացքում ներկայացված և ձեռք բերված փաստաթղթերը:~~

~~Հոդված 10.4. Նոր մրցույթի անցկացումը~~

~~1. Նոր մրցույթ հայտարարվում է, եթե՝~~

~~1) Ազգային ժողովը չի նշանակում թեկնածուին:~~

~~2) հավակնորդների, թեկնածուների թիվը պակաս է թափուր տեղերի քանակից:~~

~~3) ի հայտ են եկել սույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1.3-5-րդ կետերով նախատեսված հանգամանքներ, թեկնածուի մոտ Կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն կամ առկա են թեկնածուների ընտրությունն իրականացնելու անհնարինության այլ դեպքեր:~~

~~2. Խորհուրդը նոր մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքի մասին տեղեկանալու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում:~~

~~3. Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր կարգով:~~

Comment [Ա83]: Հանձնաժողովի կազմավորման գործող կարգը պահպանել և այդ կարգի փոփոխության վերաբերյալ դրույթները հանել:

Հոդված 23. Հանձնաժողովի գործառույթները

1. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) պետական պաշտոն զբաղեցնող անձանց, 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելը.

1.1) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների և իրավիճակային շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը.

1.2) հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների պահպանման միասնականությունն ապահովելը.

2) հայտարարագրման գործընթացը կանոնակարգելը, հայտարարագրերն ստուգելն ու վերլուծելը.

3) օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների կիրառման միասնականությունն ապահովելը.

4) կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանը մասնակցելը.

5) իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և միջոցառումների կատարման նկատմամբ մոնիտորինգ իրականացնելը և դրանց վերաբերյալ իրավասու մարմիններ առաջարկություններ ներկայացնելը.

6) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման.

~~7) օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման.~~~~7) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման:~~

Comment [Ա84]: Այս փոփոխությունը, ինչպես նաև օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը հանել, հաշվի առնելով որ 6-րդ կետով հարցը կարգավորված է:

Հոդված 24. Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովը՝

1) քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ.

2) իրավասու մարմնին կամ պաշտոնատար անձին ներկայացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ և եզրակացություններ (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին օրենքով սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ).

~~2.1.) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում կարգապահական վարույթ է հարուցում դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ, ինչպես նաև դիմում է Ազգային Ժողովի խմբակցություններին՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկման առաջարկությամբ.~~

3) վարում է հայտարարատու պաշտոնատար անձանց և հայտարարագրերի ռեեստրը.

4) սահմանում է հայտարարագրի ձևանմուշը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները, հայտարարագրերի ռեեստրի տվյալների ցանկը, հայտարարագրերի ռեեստրի վարման, հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու, հայտարարագրի արխիվացման կարգերը, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությունը և ռիսկային չափորոշիչները.

5) հրապարակում է հայտարարագրերը.

6) քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր.

7) էթիկայի հանձնաժողովներին, բարեվարքության հարցերով կազմակերպիչներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների,

Comment [ԱԺ85]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [ԱԺ86]: Այս կետը հանել, հաշվի առնելով, որ 2-րդ կետում ատաջարկվող փոփոխություններով, կարծում ենք, որ հարցն ընդհանուր առմամբ կարգավորվում է:

ինչպես նաև վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն.

8) ներկայացնում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

9) մեկնաբանում է օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումներ, վարքագծի սկզբունքները, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները.

10) վերանայում է էթիկայի հանձնաժողովների եզրակացությունները.

11) վարում է անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրություն և հրապարակում տվյալներ.

12) իրականացնում է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծություն և դրանց վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ իրավասու մարմին.

13) մշակում է կոռուպցիայի կանխարգելման ծրագրեր և դրանք ներկայացնում է Կառավարություն.

14) իրավասու մարմին կարծիք է ներկայացնում կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.

15) իրավասու մարմին ներկայացնում է իր գործունեության ընթացքում վեր հանված՝ կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկմանն ուղղված առաջարկություններ.

16) մշակում է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրեր և իրականացնում միջոցառումներ.

17) առաջարկություններ է ներկայացնում կրթական, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ.

18) կրթական ծրագրերի իրականացման համար տրամադրում է ուսումնամեթոդական ուղեցույցներ և այլ նյութեր.

19) կազմում է իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և դրանց իրականացման միջոցառումների ծրագրի (այդ թվում՝ ոլորտային) կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցներ, դրանց վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններ.

20) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա

անձանց բարեվարքության~~, կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության վերաբերյալ~~ իրականացնում է ուսումնասիրություններ և դրանց արդյունքներով ներկայացնում խորհրդատվական բնույթի եզրակացություններ.

~~21) օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ իրականացնում է ուսումնասիրություններ և դրանց արդյունքներով ներկայացնում խորհրդատվական բնույթի եզրակացություններ.~~

22) ընդունում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնագիրքը).

23) ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը.

24) մշակում է հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը.

25) ամփոփում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, ինչպես նաև իրավիճակային շահերի բախման վերաբերյալ դրույթների իրացման պրակտիկան, ներկայացնում դրա միասնականության ապահովմանն ուղղված առաջարկություններ:» բառերով.

~~«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների բարեվարքության, կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության վերաբերյալ ներկայացնում է խորհրդատվական բնույթի եզրակացություններ.~~

~~19) ընդունում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնագիրքը).~~

~~20) ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը.~~

~~21) մշակում է հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը.~~

~~22) ամփոփում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, ինչպես նաև իրավիճակային շահերի բախման վերաբերյալ դրույթների իրացման պրակտիկան, ներկայացնում դրա միասնականության ապահովմանն ուղղված առաջարկություններ:~~

1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 20-րդ ~~և 21-րդ կետերով~~ կետով նախատեսված ուսումնասիրություններ իրականացնելու, դրանց արդյունքներով եզրակացություններ

Comment [Ա87]: Այս կետը հանել, հաշվի առնելով, որ 20-րդ կետով հարցը կարգավորված է:

Comment [Ա88]: Կատարել նշված փոփոխությունը:

ներկայացնելու կարգը, ինչպես նաև բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևը սահմանում է Հանձնաժողովը:

~~1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով նախատեսված ուսումնասիրություններ իրականացնելու և դրանց արդյունքներով եզրակացություններ ներկայացնելու կարգը սահմանում է Հանձնաժողովը:~~

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 12-րդ, 15-րդ և 22-րդ կետերով նախատեսված դեպքերում առաջարկությունն ստացած մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է 30-օրյա ժամկետում քննարկել այն և արդյունքների մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

3. Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու բարեվարքության համակարգին առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, որոնք ենթակա են տրամադրման Հանձնաժողովի սահմանած ժամկետում:

(24-րդ հոդվածը լրաց. 13.09.19 ՀՕ-180-Ն, խմբ., փոփ., լրաց. 23.03.18 ՀՕ-208-Ն)

Հոդված 25. Հայտարարագրերի ստուգումը և վերլուծությունը

1. Հանձնաժողովն իրականացնում է՝

1) հայտարարագիր լրացնելու և ներկայացնելու պահանջների պահպանման ստուգում.

2) հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում.

3) հայտարարագրված տվյալների մաթեմատիկական վերլուծություն.

4) ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն:

5) հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումների կամ անձանց գրավոր դիմումների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն:

2. Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն:

2.1. Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովն իրավասու է բանկերին ուղղված հարցման միջոցով պահանջել և ստանալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց հաշիվների առկայության, հաշվի մնացորդի և հաշվի շարժի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ~~ինչպես նաև~~

բանկային պահատուփերում պահվող գույքի վերաբերյալ տեղեկություններ՝ հարցման մեջ նշելով անձի տվյալները, վերաբերելի ժամանակահատվածը կամ ամսաթիվը: Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հանձնաժողովի համատեղ իրավական ակտով: Հանձնաժողովն իրավասու է նաև հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալ օտարերկրյա բանկերից, ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանարապետության տարածքում գործող մասնաճյուղերից և ներկայացուցչություններից:— Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալուց հետո Հանձնաժողովն իրավասու է պահանջել ներկայացնել լրացուցիչ նյութեր, իսկ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում նյութերն ուղարկել գլխավոր դատախազություն:».2. Հայտարարագրերի վերլուծության գործընթացում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, Կենտրոնական դեպոզիտարիայից և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանցից, վարկային բյուրոներից պահանջելու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր և ստանալու դրանք, բացառությամբ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

3. Տեղեկությունները և փաստաթղթերը Հանձնաժողովին տրամադրվում են անվճար՝ հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան հարցումն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ, կամ հարցման հասցեատերը պահանջը կատարելու համար այլ ողջամիտ ժամկետ չի առաջարկում, որը չի կարող գերազանցել 30 օրը: Կենտրոնական դեպոզիտարիան և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձինք, ինչպես նաև վարկային բյուրոները տեղեկություններն ու փաստաթղթերը տրամադրում են անվճար՝ Հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի ներկայացրած հայտարարագրերի թվին հավասար թվով հարցումներ ներկայացվելու դեպքում:

4. Հայտարարագրերի վերլուծության գործընթացում ապահովվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասում նշված կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված տեղեկատվական բազաների հետ Հանձնաժողովի տեղեկատվական բազայի փոխգործարկելիությունը և հայտարարագրման ենթակա տվյալներին Հանձնաժողովի առցանց հասանելիությունը:

5. Հանձնաժողովն իրավասու է իր կողմից բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու անցկացնել անվճար

Comment [Ա89]: Նշված բառերը հանել:

Comment [Ա90]: Նշված նախադասությունը հանել: Մեր կարծիքով կարգը պետք է սահմանվի օրենքով:

ուսումնասիրություններ, կատարելու անվճար փորձաքննություններ և ներկայացնելու դրանց արդյունքները:

6. Եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը հանգում է եզրակացության, որ հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված չէ կամ ներկայացված է համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ, կամ հայտարարագրված տվյալը սխալ է կամ ոչ ամբողջական, ապա հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

7. Եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում մնում են կասկածներ, որ հայտարարատու պաշտոնատար անձի կամ իր ընտանիքի կազմի մեջ մտնող անձի գույքի էական փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով, կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրն օրինական կամ արժանահավատ չէ, ապա Հանձնաժողովն իրավասու է՝

ա) հայտարարատուից հայցելու պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր՝ դրանք ներկայացնելու համար տրամադրելով նվազագույնը 10, իսկ առավելագույնը՝ 30 օր ժամկետ.

բ) հայտարարագրված կամ հայտարարագրման ենթակա գործարքի կողմ հանդիսացող յուրաքանչյուր անձից կամ այն անձից, ում սեփականության իրավունքով կարող է պատկանել հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող, օգտագործվող ~~կամ տնօրինվող անշարժ գույքը~~, տրանսպորտային միջոցը կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով թանկարժեք գույքը, պահանջել ներկայացնել գույքի եւ եկամուտների իրավիճակային հայտարարագիր, եթե վերը նշված կասկածները կարող են փարատվել իրավիճակային հայտարարագրով ներկայացման ենթակա տվյալների վերլուծությամբ: Սույն կետով նախատեսված դեպքում Հանձնաժողովը կայացնում է որոշում՝ նշելով այն հանգամանքները, որոնք կարող են պարզվել իրավիճակային հայտարարագրի ներկայացմամբ:

~~7. Եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում մնում են կասկածներ, որ հայտարարատու պաշտոնատար անձի կամ իր ընտանիքի կազմի մեջ մտնող անձի գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով, կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական չէ կամ արժանահավատ չէ, ապա Հանձնաժողովն իրավասու է հայտարարատուից հայցելու պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր՝ դրանք ներկայացնելու համար տրամադրելով նվազագույնը տասը, իսկ առավելագույնը՝ 30 օր ժամկետ:~~

8. Ստացված եկամուտը սույն օրենքի իմաստով չի համարվում օրինական, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է 2.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, սակայն հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը դրամական միջոցներով փոխառություն հանձնելը կամ ստանալը, հանձնած կամ ստացած դրամական միջոցներով փոխառության դիմաց վճարներ (տոկոսներ կամ այլ

Comment [ԱԺ91]: Նշված բառերը հանել:

հատուցում) հանձնելը կամ ստանալը, դրամական միջոցներ նվիրատվություն ստանալը, դրամական միջոցներով արտահայտված շահաբաժիններ ստանալը, ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ ստանալը, գույքը օտարելուց եկամուտ ստանալը, վարձակալության դիմաց վճար կամ այլ հատուցում ստանալը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտ ստանալը, վճարներ ստանալը, գույքային իրավունքներից եկամուտ ստանալը կատարել է կանխիկ ձևով:

9. Եթե հայտարարատուն սահմանված ժամկետում չի տրամադրում պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր, կամ դրանք բավարար չեն առկա կասկածները փարատելու համար, ապա Հանձնաժողովը նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում: Որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, որոշման պատճենն ուղարկվում է հայտարարատուին, իսկ եթե վարույթը հարուցվել է դիմումի հիման վրա՝ դիմողին:

9.1. Եթե սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարատուն դատավոր կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամ է, ապա Հանձնաժողովը նյութերը գլխավոր դատախազություն ուղարկելուն զուգահեռ հարուցում է կարգապահական վարույթ: Վարույթի ընթացքում ձեռք բերված նյութերը դատավորին կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության հետ միասին ներկայացվում են Բարձրագույն դատական խորհուրդ:

9.2. Եթե սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարատուն Սահմանադրական դատարանի դատավոր է, ապա Հանձնաժողովը նյութերը գլխավոր դատախազություն ուղարկելուն զուգահեռ դրանք ուղարկում է Ազգային Ժողովի խմբակցություններին՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկման առաջարկությամբ:

10. Գլխավոր դատախազությունը նյութերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է Հանձնաժողովին՝ կցելով համապատասխան որոշման պատճենը:

«Հոդված 26.1. Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը

1. Հանձնաժողովը օրենքով սահմանված ժամկետում իրականացնում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 21-22-րդ կետերով նախատեսված անձանց բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն:

2. Սույն օրենքի իմաստով բարեվարքության ուսումնասիրությունը ներառում է.

1) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգում.

2) անձի կողմից նախկինում քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի, այդ թվում՝ կոռուպցիոն

Comment [Ա92]: Նշված բառերը հանել:

Comment [Ա93]: Նշված բառերը հանել:

գործարքներում ներգրավվածության, վերջիններիս կողմից վարքագծի կանոնների պահպանման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտում կատարած լինելու հանգամանքների ուսումնասիրություն.

անձի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրություն.

3) անձի գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտներին համապատասխանության, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրություն.

4) անձանց աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն.

անձանց բրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն:

3. Հանձնաժողովը բարեվարքության ուսումնասիրության գործընթացում իրավասու է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից պահանջելու և ստանալու Հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող ցանկացած նյութ, փաստաթուղթ կամ տեղեկություն:

4. Բարեվարքության, այդ թվում՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության վերաբերյալ ուսումնասիրությանը Հանձնաժողովի որոշմամբ կարող են ներգրավվել նաև միջազգային փորձագետներ:

5. Հանձնաժողովը տեղեկատվության ամփոփման և ուսումնասիրության արդյունքում կազմում և իրավասու մարմին է ներկայացնում անձի բարեվարքության վերաբերյալ եզրակացություն:

Comment [Ա94]: Կատարել նշված փոփոխությունները:

Comment [Ա95]: Նշված բառերը հանել:

Comment [Ա96]: Կատարել նշված փոփոխությունները:

Հոդված 42. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի կողմից Հանձնաժողովի առաջին կազմի անդամների ընդհանուր թվի մեծամասնության նշանակման օրվանից, բացառությամբ 9-րդ, 10-րդ հոդվածների, 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև 24-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 21-րդ կետերի և 1.1-ին մասի, որոնք ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 2-րդ և 2.1-ին մասերով սահմանված ժամկետներում:

2. Սույն օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2018 թվականի ապրիլի 10-ից:

2.1 Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերը, ինչպես նաև 24-րդ հոդվածի 1-ին մասի 2.1.-ին, 20-րդ, 21-րդ կետերը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատախազների եւ քննիչների թեկնածուների մասով ուժի մեջ են մտնում համապատասխանաբար «Հանրային

ծառայության մասին», «Դատախազության մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» և «Քննչական կոմիտեի մասին» օրենքներում համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո:

3. Հանձնաժողովի առաջին կազմը ձևավորվում է հետևյալ կերպ՝ մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը Ազգային ժողովը «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Հանձնաժողովի հինգ անդամներին հետևյալ ժամկետներով՝

1) Հանձնաժողովի երկու անդամ՝ 6-ական տարի.

2) Հանձնաժողովի երկու անդամ՝ 4-ական տարի.

3) Հանձնաժողովի մեկ անդամ՝ 3 տարի:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշված Հանձնաժողովի մեկական անդամի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն Կառավարությունը և Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը, 2-րդ կետում նշված պաշտոններում՝ Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը, իսկ 3-րդ կետում նշված պաշտոնում՝ Բարձրագույն դատական խորհուրդը: Սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջի կատարումն ապահովում են Կառավարությունը և Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը: Հանձնաժողովի առաջին կազմի բոլոր անդամների նշանակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովն իր կազմից Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետով ընտրում է Հանձնաժողովի նախագահ: Մինչև Հանձնաժողովի նախագահի ընտրվելը Հանձնաժողովի նախագահի լիազորություններն իրականացնում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

2.1. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերը, ինչպես նաև 24-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 21-րդ կետերը և 1.1-ին մասն ուժի մեջ են մտնում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո:

3. Հանձնաժողովի առաջին կազմը ձևավորվում է հետևյալ կերպ՝ մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը Ազգային ժողովը «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Հանձնաժողովի հինգ անդամներին հետևյալ ժամկետներով՝

1) Հանձնաժողովի երկու անդամ՝ 6-ական տարի.

2) Հանձնաժողովի երկու անդամ՝ 4-ական տարի.

3) Հանձնաժողովի մեկ անդամ՝ 3 տարի:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշված Հանձնաժողովի մեկական անդամի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն Կառավարությունը և Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը, 2-րդ կետում նշված պաշտոններում՝ Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը, իսկ 3-րդ կետում նշված պաշտոնում՝ Բարձրագույն դատական խորհուրդը: Սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջի կատարումն ապահովում են Կառավարությունը և Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը: Հանձնաժողովի առաջին կազմի բոլոր

~~անդամների նշանակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովն իր կազմից Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետով ընտրում է Հանձնաժողովի նախագահ: Մինչև Հանձնաժողովի նախագահի ընտրվելը Հանձնաժողովի նախագահի լիազորություններն իրականացնում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:~~

~~4.1. Հայտարարագրերի վերլուծության վերաբերյալ սույն օրենքով սահմանված դրույթները կիրառելի են նաև 2017 թվականի հուլիսի 1-ից ներկայացված կամ ներկայացման ենթակա հայտարարագրերի նկատմամբ:~~

Comment [Ա97]: Նշված մասը հանել:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 8-րդ գլուխը:

6. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հանդիսանում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի իրավահաջորդը:

7. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմը գործում է մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների ձևավորումը:

8. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների քանակը և հաստիքացուցակը, կառուցվածքն ու կանոնադրությունը հաստատվում են մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

9. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներում համապատասխան նշանակումները կատարվում են Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների քանակը և հաստիքացուցակը, կառուցվածքն ու կանոնադրությունը հաստատվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

(42-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. ՀՕ-180-Ն, լրաց. 23.03.18 ՀՕ-208-Ն)

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Հոդված 29. **~~Պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված~~ Նվերներ ընդունելու արգելքը**

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չպետք է ընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տան~~, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ~~:

2. Սույն ~~հոդվածի~~ օրենքի իմաստով՝ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոն չզբաղեցնող անձի: Այն ընդգրկում է նաև ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված գույքը կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը,

ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն:

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար ~~պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված~~ թույլատրելի նվերներ են՝

1) պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի ժամանակ տրվող նվերները կամ կազմակերպվող հյուրասիրությունը.

2) հրապարակային միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերները.

3) սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.

4) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.

5) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի հետևանքով.

6) օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրվող արարողակարգային նվերները:

4. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված և սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ կետերով նախատեսված նվերն իր արժեքով գերազանցում է 75 000 Հայաստանի Հանրապետության դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն և հաշվառվում է որպես այդպիսին: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները Կառավարության սահմանած կարգով պարտավոր են այն հանձնել պետությանը կամ համայնքին:

5. Սույն հոդվածով թույլատրելի համարվող նվերի արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական գինը, որը նվեր ստացողը գիտեր կամ կարող էր իմանալ նվերի ընդունման պահին կամ դրա ընդունումից հետո:

6. Հանրային ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ ոլորտային օրենքներով կարող են սահմանվել այլ կարգավորումներ:

Comment [ԱԺ98]: Ընդունելի լինելու դեպքում, իրացնել ԴՕ 73-րդ հոդվածի վերաբերյալ ներկայված առաջարկները:

Հոդված 30. ~~Պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված~~ Նվերների հաշվառումը

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են Կառավարության սահմանած կարգով հայտնել սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված թույլատրելի նվերների ստացման մասին:

2. Նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 34. Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականությունը

1. Սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական պաշտոն զբաղեցնող անձինք, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձինք, ոստիկանության, հարկային, մաքսային, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց), 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք սույն օրենքով նախատեսված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր:

3. Պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձինք, ոստիկանության, հարկային, մաքսային, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք սույն օրենքով նախատեսված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի և եկամուտների հայտարարագիր:

4. Հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

5. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ: Եթե սույն օրենքով սահմանված ժամկետում ընտանիքի անդամները չեն ներկայացնում իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ, ապա համարվում են հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած:

5.1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձինք մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագիր չներկայացրած անձը համարվում~~ է հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած~~.

5.2. Իրավիճակային հայտարարագրի նկատմամբ տարածվում են հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնի ստանձնման հայտարարագրի բովանդակության և ներկայացման կարգի համար սույն օրենքով նախատեսված ընդհանուր կանոնները.

5.3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով:

6. Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

7. Հայտարարատու պաշտոնատար անձն իր հայտարարագրում լրացնում է նաև իր ընտանիքի անչափահաս անդամների, ինչպես նաև իր խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի գույքի և եկամուտների վերաբերյալ իրեն հայտնի տվյալները և պատասխանատու է դրանց իսկության համար:

~~8.~~ 8. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

~~Հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող նրա ընտանիքի չափահաս անդամները հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալները և պատասխանատու են դրանց իսկության համար:~~

~~9. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:~~

~~9. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ծնողը, քույրը և եղբայրը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:~~

~~10. Սույն օրենքի իմաստով՝ համատեղ բնակվող է համարվում պաշտոնն ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը: Սույն օրենքի իմաստով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ է համարվում այն անձը, ով հարկային տարում 183 և ավելի օր փաստացի գտնվել է Հայաստանի Հանրապետությունում:~~

~~11. Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կողմից հայտարարագրերը սույն օրենքով և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների~~

Comment [Ա99]: Իրավիճակային հայտարարագրի վերաբերյալ կարգավորումները հանել և այս փուլում ձեռնպահ մնալ դրանք գործարկելուց, հաշվի առնելով որ Կոռուպցիայի կանխարգելման համակարգը դեռևս լիարժեքորեն և չի գործում:

~~պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:~~

Comment [Ա100]: 9-րդ և 10-րդ մասերը հանել:

11. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի, ինչպես նաև սույն հոդվածի 5.1.-րդ կետով սահմանված դեպքերում հայտարարագրերը սույն օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

~~12. Հայտարարագրի ներկայացման փաստի ուժով հայտարարատու պաշտոնատար անձը և նրա ընտանիքի անդամը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով տալիս են հաշվետու ժամանակահատվածի համար իրենց վարկային պատմությանը և արժեթղթերի, այդ թվում՝ դրանցով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններին ծանոթանալու համաձայնություն:~~

12. Հայտարարագրի ներկայացման փաստի ուժով հայտարարագիր ներկայացրած անձը հաստատում է, որ ծանոթ է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի իրավասությանը՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից ստանալու իրեն առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն:

13. Հայտարարագրի ձևանմուշը սահմանում է Կառավարությունը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությամբ:

Հոդված 41. Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը

1. Հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները:

2. Հայտարարատուի եկամուտների ստացման աղբյուր է այն անձը, որը հայտարարատուին վճարել է սույն հոդվածով սահմանված եկամուտ:

3. Եկամուտները հայտարարագրվում են առանց հարկերի և (կամ) պարտադիր այլ վճարների:

4. Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները.

1) աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները.

2) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների

բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը.

3) ստացված փոխառությունները (վարկերը).

4) տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը.

5) շահաբաժինները.

6) խաղատներում կամ շահումներով խաղերում ստացված եկամուտները (շահումները).

7) մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները).

8) նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացված).

9) ժառանգության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները).

10) ապահովագրական հատուցումները.

11) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը.

12) գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը.

13) վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում.

14) միանվագ վճարները.

15) գույքային իրավունքներից ստացված եկամուտը.

16) քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը.

17) կենսաթոշակը.

18) գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը:

5. Հայտարարագրման ենթակա են նաև սույն հոդվածի 4-րդ մասով չսահմանված այլ եկամուտները՝ նշելով դրանց տեսակները և ստացման աղբյուրները:

6. Եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝

1) եկամտի տեսակը.

2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն.

3) եկամտի չափը (գումարը).

4) եկամտի արժույթը:

7. Հայտարարագրման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում ստացված այն եկամուտը կամ դրանց հանրագումարը, որը չի գերազանցում 200 000 Հայաստանի Հանրապետության դրամը:

8. Պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրն ստացված եկամուտները:

9. Ստացված եկամուտը սույն օրենքի իմաստով չի համարվում օրինական, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է ~~երկու~~ մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, սակայն

Comment [ԱԺ101]: Թողնել անփոփոխ:

հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը դրամական միջոցներով փոխառություն հանձնելը կամ ստանալը, հանձնած կամ ստացած դրամական միջոցներով փոխառության դիմաց վճարներ (տոկոսներ կամ այլ հատուցում) հանձնելը կամ ստանալը, դրամական միջոցներ նվիրատվություն ստանալը, դրամական միջոցներով արտահայտված շահաբաժիններ ստանալը, ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ ստանալը, գույքը օտարելուց եկամուտ ստանալը, վարձակալության դիմաց վճար կամ այլ հատուցում ստանալը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտ ստանալը, վճարներ ստանալը, գույքային իրավունքներից եկամուտ ստանալը կատարել է կանխիկ ձևով:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Հոդված 9. Սահմանադրական դատարանի դատավորի անձեռնմխելիությունը

1. Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

2. Սահմանադրության 164-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ:

3. Սահմանադրական դատարանի դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո:

4. Ի լրումն Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքի՝ ազատությունից զրկելու պահից դատավորն իրավունք ունի հեռախոսազանգով կամ հաղորդակցման այլ միջոցներով այդ մասին անհապաղ տեղեկացնելու Սահմանադրական դատարանի նախագահին կամ այլ դատավորի:

5. Սույն մասով նախատեսված դեպքերում դատավորին ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Սահմանադրական դատարանի դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում են Սահմանադրական դատարանի նախագահը և գլխավոր դատախազը: Սահմանադրական դատարանի դատավորին ձերբակալելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է Սահմանադրական դատարանի նախագահին և գլխավոր դատախազին: Դատավորին ազատությունից զրկած մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել Սահմանադրական դատարանի նախագահի և մյուս դատավորների անարգել մուտքն այն վայր, որտեղ պահվում է ազատությունից զրկված դատավորը, և ապահովել նրանց տեսակցությունը դատավորի հետ:

6. Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը և տվյալ գործով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը :

Comment [ԱԺ102]: Թողնել անփոփոխ:

7. Քրեական վարույթի շրջանակում դատավորի նկատմամբ գործողությունները կատարվում են՝ առավելագույնս ապահովելով մինչդատական վարույթի գաղտնիությունը, դատավորի և դատական իշխանության հեղինակության ու անկախության նկատմամբ հարգանքը, բացառելով դատավորի գործունեությանը ուղղակի կամ անուղղակի որևէ միջամտություն:

8. Սահմանադրական դատարանի շենքում քննչական գործողություն կատարելու համար դատարանի շենք մուտք գործելն իրականացվում է Սահմանադրական դատարանի նախագահի իրազեկմամբ:

9. Քրեական հետապնդման մեջ չգտնվող դատավորի մասնակցությամբ քննչական գործողություններ կարող են կատարվել Սահմանադրական դատարանի նախագահի իրազեկմամբ:

10. Քրեական հետապնդման մեջ չգտնվող դատավորի մասնակցությամբ առանց դատարանի թույլտվության իրականացվող քննչական գործողությունները կատարվում են նախապես դատավորի հետ համաձայնեցված ժամանակ և վայրում՝ առավելագույնս ապահովելով քննչական գործողության գաղտնիությունը, դատավորի հեղինակության և անկախության նկատմամբ հարգանքը, բացառելով դատավորի գործունեությանը ուղղակի կամ անուղղակի որևէ միջամտություն:

Հոդված 12. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերը

1. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարում են, եթե՝

1) ավարտվել է նրա լիազորությունների ժամկետը.

2) լրացել է նրա պաշտոնավարման տարիքը.

3) նա մահացել է.

4) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

5) նա «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական է ներկայացրել.

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

7) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով:

2. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները սույն օրենքի 83-րդ հոդվածով սահմանված կարգով դադարեցվում են, եթե նա՝

1) խախտել է Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները.

2) պաշտոնավարման ընթացքում զբաղվել է քաղաքական գործունեությամբ.

3) ժամանակավոր անաշխատունակության պատճառով վեց ամիս շարունակ ի վիճակի չի եղել կատարելու Սահմանադրական դատարանի դատավորի

լիազորությունները, բացառությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվելու դեպքերի.

4) նշանակումից հետո ձեռք է բերել այնպիսի ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որի հետևանքով այլևս ի վիճակի չէ կատարելու Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները.

5) կատարել է էական կարգապահական խախտում:

3. Էական կարգապահական խախտում է՝

1) Սահմանադրական դատարանի դատավորի՝ Սահմանադրական դատարանի նիստերից առանց հարգելի պատճառի մեկ տարվա ընթացքում երեք և ավելի անգամ բացակայելը.

2) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող Սահմանադրական դատարանի դատավորի կրկին կարգապահական խախտում կատարելը.

~~3) Սահմանադրական դատարանի դատավորի այնպիսի արարք կատարելը, որը վարկաբեկում է Սահմանադրական դատարանի հեղինակությունը, կամ որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:~~

3) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-9-րդ, 11-12-րդ, 15-16-րդ, կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 5-10-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելը, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ.

3.1. Սույն հոդվածի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

3.2. Սույն հոդվածի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Comment [ԿՀ103]: Ընդունելի լինելու դեպքում՝ համապատասխանեցնել ԴՕ 142-րդ հոդվածի վերաբերյալ ներկայացված առաջարկներին:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դեպքում Ազգային ժողովին հրաժարական ներկայացնելիս Սահմանադրական դատարանի դատավորը այդ մասին անհապաղ տեղեկացնում է Սահմանադրական դատարանի նախագահին:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելու դեպքերում՝ նրա լիազորությունները դադարելու օրվան նախորդող յոթերորդ ամսվա վերջին օրը, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 3-7-րդ կետերով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցվելուց ոչ ուշ, քան մեկ օր հետո Սահմանադրական դատարանի նախագահն այդ մասին տեղեկացնում է համապատասխանաբար Հանրապետության նախագահին, Վճռաբեկ դատարանի նախագահին և Կառավարությանը:

(12-րդ հոդվածը խմբ. 29.03.19 ՀՕ-5-Ն)

Հոդված 13. Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը

1. Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը Սահմանադրական դատարանի դատավորի՝ սույն օրենքով սահմանված վարքագծի կանոնների խախտումն է:

2. Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկում է Սահմանադրական դատարանը սույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված կարգով:

~~3. Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել սույն օրենքով սահմանված վարքագծի կանոնները դատավորի կողմից խախտվելու հիմքով այն հայտնաբերելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց վեց ամիս հետո:~~

3. Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել սույն օրենքով սահմանված վարքագծի կանոնները դատավորի կողմից խախտվելու հիմքով այն հայտնաբերելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց մեկ տարի հետո՝ բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված խախտումների: Դատավորի կողմից սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնները խախտելու հիմքով կարգապահական վարույթ կարող է հարուցվել դրանք հայտնաբերելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց երեք տարի հետո:

Comment [ԿՀ104]: նույնը

4. Սահմանադրական դատարանի դատավորին վարչական, քաղաքացիաիրավական կամ օրենքով նախատեսված այլ պատասխանատվության ենթարկելը չի բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա լիազորությունները դադարեցնելու հնարավորությունը և հակառակը:

Հոդված 14. Սահմանադրական դատարանի դատավորի վարքագծի կանոնները

1. Ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է՝

1) զերծ մնալ դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց.

2) չօգտագործել կամ թույլ չտալ այլ անձանց օգտագործելու իր՝ դատավորի պաշտոնի հեղինակությունը՝ ի շահ իրեն կամ այլ անձի.

3) դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն.

~~4) զերծ մնալ մեկ այլ դատավորի կողմից արդարադատության իրականացմանը միջամտելուց.~~

5) զերծ մնալ դատավորի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց.

6) զերծ մնալ դատարանի գործողությունները, դատական ակտերը հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց, բացառությամբ օրենքով նախատեսված կամ գիտական ազատության շրջանակում իրականացվող մասնագիտական գործունեության դեպքերի.

7) զերծ մնալ որևէ դատարանում քննվող կամ ակնկալվող գործի վերաբերյալ հրապարակայնորեն կարծիք հայտնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավորը գործով հանդես է գալիս որպես կողմ կամ կողմի օրինական ներկայացուցիչ.

8) զերծ մնալ այնպիսի հայտարարություն անելուց կամ վարքագիծ դրսևորելուց, որը վտանգում կամ կասկածի տակ է առնում դատավորի կամ դատարանի անկախությունը և անաչառությունը.

9) արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու վերաբերյալ անհապաղ հայտնել Սահմանադրական դատարանին.

10) հանդես չգալ որպես ներկայացուցիչ կամ չտրամադրել խորհրդատվություն, այդ թվում՝ անհատույց հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հանդես է գալիս որպես օրինական ներկայացուցիչ կամ անհատույց իրավաբանական խորհրդատվություն է մատուցում իր մերձավոր ազգականներին կամ իր խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձանց.

11) ձեռնպահ մնալ որևէ մեկից նվեր կամ այլ գույքային առավելություն ընդունելուց կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալուց, եթե դա ողջամտորեն կարող է ընկալվել որպես դատավորի վրա ներգործելուն նպատակաուղղված, պահպանել դատավորի՝ նվեր ընդունելու սահմանափակումներին վերաբերող սույն օրենքով նախատեսված կանոնները.

12) չնախաձեռնել, թույլ չտալ և հաշվի չառնել առանց դատավարության հակառակ կողմի կամ նրա ներկայացուցչի մասնակցության (“ex parte” (էքս պարտե), այսուհետ՝ ընդդիմազերծ) դատավարության մյուս կողմի կամ նրա ներկայացուցչի հետ շփումները, իսկ դատավորի կամքից անկախ ընդդիմազերծ շփումներ տեղի ունենալու դեպքում առաջին իսկ հնարավորության պարագայում հայտնել դրանց բովանդակությունն այն կողմին, որը մասնակից չի եղել այդ շփումներին՝ հնարավորություն տալով արձագանքելու: Սույն կանոնից բացառությունները թույլատրելի են միայն հետևյալ դեպքերում.

ա. երբ հանգամանքների բերումով ընդդիմազերծ շփումներն անհրաժեշտ են կազմակերպական նպատակներով, ինչպես օրինակ՝ դատական նիստի ամսաթիվը և ժամը համաձայնեցնելու կամ դատավարության կազմակերպման այլ դեպքերում, և այն պայմանով, որ շփումները չեն վերաբերում գործի էությանը, դրանց արդյունքում դատավարության կողմերից մեկը չի ստանում դատավարական կամ այլ առավելություն մյուս կողմի նկատմամբ, և դատավորն առաջին իսկ հնարավորության պարագայում հայտնում է այդ շփումների բովանդակությունը մյուս կողմին՝ նրան հնարավորություն տալով արձագանքելու,

բ. երբ դատավորի կողմից միակողմանի շփումներ իրականացնելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով.

13) չնախաձեռնել և թույլ չտալ այն դատավորի հետ խորհրդակցելը, որի վերաբերյալ Սահմանադրական դատարանը կայացրել է գործի քննությանը մասնակցելու անհնարինության վերաբերյալ որոշում.

14) կիրառման ենթակա իրավունքի վերաբերյալ հարցերով խորհրդակցելու համար գործի ելքում չշահագրգռված մասնագետի դիմելիս (բացառությամբ այլ դատավորի, ինչպես նաև դատարանի աշխատակազմի այն աշխատակիցների, որոնց գործառույթը դատավորին արդարադատություն իրականացնելիս օժանդակելն է) կողմերին տեղեկացնել այդ մասնագետի ինքնության, ներկայացված հարցի վերաբերյալ ստացված կարծիքի մասին և հնարավորություն տալ նրանց այդ կապակցությամբ ներկայացնելու իրենց դիրքորոշումը.

15) ներկայացնել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ.

16) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնել պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ է:»:

2. Արդարադատության և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման հետ կապված դատավորի պարականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ գործունեության նկատմամբ: Ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է՝

1) քննել և լուծել իր իրավասությանը վերապահված հարցերը, բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված դեպքերի.

2) որոշում կայացնելիս լինել ինքնուրույն.

3) լինել անաչառ և զերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելուց.

4) հարգալից և բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերել դատավարության մասնակիցների, դատավորների, դատարանի աշխատակազմի և բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատավորը շփվում է ի պաշտոնե.

5) թույլ չտալ շահերի բախում, բացառել ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունների՝ իր ի պաշտոնե լիազորությունների իրականացման վրա որևէ ազդեցություն.

6) արդարադատության և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումից զատ, այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

7) չմիջամտել դատական նիստերի ձայնագրման համակարգի աշխատանքին.

8) զերծ մնալ այնպիսի գործողություններ ձեռնարկելուց, որոնք նպատակ են հետապնդում ստեղծել գործի քննությանը մասնակցելու անհնարինության հիմքեր.

9) սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում բացահայտել դրանք.

10) պահպանել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի պահանջները.

11) դատական նիստերը վարել օրենքով սահմանված հանդերձանքով:

Comment [ԿՀ105]: Ընդունելի լինելու դեպքում՝ համապատասխանեցնել ԴՕ նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկներին:

Comment [ԿՀ106]: Նույնը

Հոդված 15. Սահմանադրական դատարանի դատավորի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները

1. Սահմանադրական դատարանի դատավորը չպետք է նվեր ընդունի կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տա~~, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է իր պաշտոնեական պարտականություններն իրականացնելու հետ~~: Դատավորը պետք է ձգտի զերծ պահել իր հետ բնակվող մերձավոր ազգականներին այդպիսի գործողություններից:

2. Սույն օրենքի իմաստով՝ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի դատավոր չհանդիսացող այլ անձի, և ընդգրկում է նաև ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, ակնհայտ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը և այլ գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն:

3. Սույն հոդվածով սահմանված սահմանափակումները չեն տարածվում՝

1) դատավորի հետ բնակվող մերձավոր ազգականի՝ իր ձեռնարկատիրական, մասնագիտական կամ այլ բնույթի գործունեության կապակցությամբ ստացած նվերի վրա, այդ թվում՝ այն նվերի, որը կարող են համատեղ օգտագործել ընտանիքի այլ անդամները, այդ թվում՝ դատավորը, սակայն պայմանով, որ նման նվերը չի կարող ողջամտորեն ընկալվել որպես դատավորի պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված.

2) կրթաթոշակի, դրամաշնորհի կամ նպաստի վրա, որը տրվել է հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի հետևանքով.

3) ֆինանսական կազմակերպություններից սովորական կամ ընդհանուր պայմաններով ստացած փոխառության վրա:

4. Դատավորի համար թույլատրելի նվերներ են համարվում՝

1) հրապարակային միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերները.

2) կենցաղային հյուրընկալության դեպքում տրվող նվերները, եթե դրանք իրենց բնույթով համապատասխանում են կենցաղային հյուրընկալության ժամանակ սովորաբար տրվող նվերներին.

3) մերձավոր ազգականից ստացած նվերները.

4) բարեկամից ստացած նվերները, եթե նվերը էությամբ և չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջև հարաբերությունների բնույթին:

5. Եթե դատավորն ստացել է սույն հոդվածով թույլատրելի չհամարվող նվեր, ապա նա պարտավոր է այն վերադարձնել կամ համարժեք հատուցում վճարել նվերն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Եթե սահմանված ժամկետում նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա նա պարտավոր է նվերն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, այն հանձնել Հայաստանի Հանրապետությանը՝ Կառավարության սահմանած կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 153.1. Ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման կարգը

(վերնագիրը խմբ. 13.09.19 ՀՕ-175-Ն)

1. Ազգային ժողովի նշանակած ինքնավար մարմնի անդամի լիազորություններն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում կարող են դադարեցվել այդ ինքնավար մարմնի եզրակացության հիման վրա՝ սույն հոդվածով սահմանված կարգով: ~~Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի լիազորություններն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում դադարեցնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը խմբակցությունը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկության հիման վրա:~~

2. Եզրակացությունն օրենքով սահմանված կարգով ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահն ապահովում է դրա տրամադրումը պատգամավորներին, իսկ ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին հարցը քննարկվում է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում:

3. Եզրակացությունում նշված ինքնավար մարմնի անդամն առնվազն մեկ շաբաթ առաջ գրավոր տեղեկացվում է Ազգային ժողովի նիստում հարցի քննարկման մասին: Նրա բացակայության դեպքում հարցի քննարկումը հետաձգվում է երկու անգամ՝ երկուական շաբաթով, որից հետո այն քննարկվում է հաջորդ հերթական նիստերում՝ անկախ նրա ներկայությունից:

4. Ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 149-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հետևյալ տարբերությամբ՝ որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս ինքնավար մարմնի նախագահը կամ օրենքով սահմանված կարգով նրան փոխարինողը, որից հետո ելույթ կարող է ունենալ և հարցերին պատասխանել եզրակացությունում նշված ինքնավար մարմնի անդամը:

Comment [ԱԺ107]: Նախադասությունը հանել, քանի որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նույնպես ինքնավար մարմին է:

5. Հարցի քննարկման ավարտին քվեարկության է դրվում ինքնավար մարմնի եզրակացության հիման վրա՝ ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին հարցը:

6. Ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին Ազգային Ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

(153.1-ին հոդվածը լրաց. 17.01.18 ՀՕ-50-Ն, խմբ. 13.09.19 ՀՕ-175-Ն)

«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

~~**Հոդված 13.4. Բանկային գաղտնիքի տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին**~~

~~***(վերնագիրը խմբ. 09.06.17 ՀՕ-113-Ն)***~~

~~1. «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակով և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց վերաբերյալ նրանց համաձայնությամբ վարկային տեղեկատվության տրամադրումը բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:~~

Հոդված 13.4. Բանկային գաղտնիքի տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով սահմանված դեպքերում և կարգով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց վերաբերյալ վարկային և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:

Comment [ԿՀ108]: Կարծում ենք, որ այս մասն ըստ էության համապատասխանեցված չէ «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին և ըստ այդմ՝ նույն օրենքի 8-րդ հոդվածին, քանի որ նշված նորմերի տրամաբանությամբ՝ այդ օրենքում և «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում պետք է սահմանել բանկային գաղտնիքի տրամադրման, պահպանման և հանձնաժողովի իրավասության շրջանակներում օգտագործման հստակ կարգ (տես՝ օրինակ 10-րդ և 11-րդ հոդվածներ):

Պարզ չէ նաև, թե բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն օգտագործելու դեպքում, հանձնաժողովը ինչպես է ապահովելու բանկային գաղտնիքը չհրապարակելու պահանջը: